

ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԳԱՒԱՌԸ 1920Ի ԹՈՒՐՔ-ՀԱՅԿԱԿԱՆ պատերազմը ի սկզբանէ
ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՆԱԽՕՐԵԱԿԻՆ

ԿԱՐԻՆԵ ԱԼԵՔՍԱՆԵԱՆ
karine.aleksanyan@yahoo.com

1920 Մեպտեմբերի 23ին սկսուող թուրք-հայկական պատերազմը ի սկզբանէ անյաջող ընթացք ունեցաւ հայկական կողմի համար։ Հայկական բանակը չկարողացաւ լուրջ դիմադրութիւն ցոյց տալ։ Կարճ ժամանակում հայկական ուժերին քանակապէս գերազանցող թուրքական զօրքը գրաւեց Սարիղամիշն ու Մերդենէկը։ Կառավարութիւնը մի շարք արտակարգ միջոցառումներ ձեռնարկեց երկիրը պատերազմական պայմաններին համապատասխանեցնելու համար։ Նա դիմեց նաեւ դիւանագիտական քայլերի՝ դրսից օգնութիւն ստանալու համար։ Սակայն Դաշնակից երկրները հայ ժողովրդի համար այդ ճակատագրական պահին թողեցին նրան միայնակ։ Ինչ վերաբերում է Խորհրդային Ռուսաստանի կառավարութեանը, ապա վերջինս վարում էր չմիջամտելու քաղաքականութիւն, նպատակ ունենալով յարմար առիթն օգտագործելով հասնել Հայաստանի խորհրդայնացմանը։

1920 Հոկտեմբերի 30ին, առանց լուրջ դիմադրութեան ընկաւ Կարսը։ Կարսի անկումը փաստօքն լուծեց պատերազմի ելքը։ Նոյեմբերի 7ին զինադադարի պայմաններով թուրքերին յանձնուեց Ալեքսանդրապոլ քաղաքն ու բերդը։ Կարաբեքիրը առաջարկած զինադադարով հայերին ստիպեց փաստօքն առանց դիմադրութեան իրեն յանձնել Ալեքսանդրապոլը եւ գրկուել կարեւոր ռազմական դիրքերից³։ Այնուհետեւ Նոյեմբերի 8ին առաջարկեց զինադադարի շատ աւելի ծանր պայմաններ՝ նպատակ ունենալով մերժման դէպքում, զարգացնել ռազմական յաջողութիւնները եւ գրաւել Ալեքպոլի գաւառը։ Կարաբեքիրի հաշիները ճշշտ դուրս եկան։ Հայաստանի կառավարութիւնը անընդունելի համարեց այդ առաջարկները⁴։ Թուրքական զօրքերը, վերսկսելով ռազմական գործողութիւնները, գրաւեցին Ալեքպոլի գաւառը։ Հարկ եղաւ ռազմական գործողութիւնների մի քանի օր, որպէսզի Հայաստանի կառավարութեանը պարզ դառնար, որ հաշտութեան կնքումն ամէն գնով անհրաժեշտ էր։ Հայաստանի Հանրապետութեան կառավարութեան՝ թուրքական զօրքերի առաջնադաշտումը կասեցնելու վերջին ճիկերը ձախողութեցին, բանակի բարոյակումը յաղթահարել չափողուեց։ Հայոց բանակն անհաղորդ մնաց կառավարութեան կոչերին եւ ճգտումներին։ Ալեքպոլի գաւառի անպաշտան մնացած գիւղացիները ստիպուած եղան «աղ ու հացով» դիմաւորել իրենց թշնամուն։

Դեռեւ 1918ին Ալեքսանդրապոլը գրաւելու ժամանակ թուրքերի կողմից կոտորւում էին ամբողջովին այն գիւղերը որոնք չէին յայտնում իրենց հնագանդութիւնը եւ զէնք էին բարձրացնում նրանց դէմ։ Կան բազմաթիւ արխիւային փաստեր այս մասին։ Ահա դրանցից մէկը՝ Գիւմրիի գաւառի վարչութեան նախագահ Մեհմէտ Ռեշիդի տեղական վարչութեան նախագահին ուղղուած հրամանում տեղեկացւում է, որ Սոգութլու ուղարկուող թուրք զինուորներին դիմադրելու համար Արթիկ, Շիրվանջուղ եւ Մահմուղջուղ գիւղերի ընակիները զինուորական օրէնքի խստութեամբ պատժուած են, պահանջւու

է մէկ անգամ եւս գիւղական ընակչութեանը յայտարարել զինուորների դէմ զէնք բարձրացնող գիւղերի ոչնչացման մասին օրէնքը՝ ինչ վերաբերում է 1920ին, ապա այս մասին անուղղակիորէն վկայում է Վահէ Արծրունին իր գրքում, նշելով որ Հայկական գիւղերը գրաւում էին առանց դիմադրութեան, իսկ այն գիւղերը, որոնք դիմադրում էին՝ ամբողջովին ոչնչացւում էին, ինչպէս՝ Մեծ Արթիկ, Զրախուու, Հաճի Նազար:

Հայաստանի կառավարութիւնը հրաժարուեց նոյեմբերի 8ի զինադադարից եւ շարունակեց պատերազմը յոյսը դնելով ոչ-այնքան հայոց բարոյալքուած բանակի, որքան՝ դիւնագիտական միջնորդութեան վրայ: Կառավարութեան համոզմամբ՝ թէ՛ Խորհրդային Ռուսաստանը եւ թէ՛ Անտանտը չէին կարող թոյլ տալ թուրքերի յետագայ առաջնադարձումը, քանի որ ըստ իրենց, դա նրանց շահերից չէր բխում: Դժբախտաբար Հայաստանի կառավարութեան հաջուարկները սիսալ դուրս եկան: Դաշնակիցները չմիջամտեցին յոյս ունենալով, որ թուրք-հայկական պատերազմում թուրքերի առաջնադարձմանը կը յաջորդի թուրքական նուաճման ընդլայնումը Անդրկովկասում, ինչը կը յանդեցնի Խորհրդային Ռուսաստանի եւ թուրքայի միջեւ պատերազմի: Ինչ վերաբերում է Խորհրդային Ռուսաստանին, ապա այն տալով գիւնագիտական միջնորդութեան համաձայնութիւնը, ռազմական օգնութիւնը պայմանաւորում էր նախ Մերի Պայմանագրից հրաժարմամբ, ապա եւ Հայաստանի խորհրդայնացմամբ⁸:

Հայաստանի կառավարութիւնը նոյեմբերի 15ին որոշում ընդունեց թուրքական պայմաններն ընդունելու մասին եւ պատուիրակութիւն ուղարկեց Ալեքսանդրապոլ՝ զինադադար Կնքելու համար: Ներքին Գործերի նախարար Սարգսի Արարատեանի գլխաւորութեամբ պատուիրակութիւնը Կնքեց վերջ-նական զինադադար, որի համաձայն Հայկական զինուած ուժերը ես քաշուեցին՝ զբաղեցնելով Որթնաւ-Բաշ Ապարան-Դանագիրմազ-Սոնդուրլու-Ղրմզու-Ալագեազ գիծը: Թուրքերը բանակցութիւնների նախօրեակին գտնուում էին Նալբանդ կայարանի, Մեծ Պարնի, Զրախի, Ղողաթ, Ղոլիջան, Արթիկ, Սոնդուրլու գիւղերի սահմաններում: Այստեղից մինչեւ Բաշ Ապարան եւ թալին ընկած տարածքը յայտարարուեց չչզոք գտահից: Այս գոտու մէջ ընկան 45 գիւղեր, որոնք շուտով լցուեցին Տաճկաստանից, Սարիղամիշից, Կարսից, Ալեքսանդրապոլից եւ այլ վայրերից եկած գաղթականներով⁹:

Հայաստանի կառավարութիւնը, քիչ աւելի ուշ՝ Դեկտեմբերի 2ին, ստիպուած եղաւ կատարել անխուսափելին՝ իշխանութիւնը յանձնել բոլշևիկներին: Իսկ Դեկտեմբերի 2ի լոյս 3ի գիշերը, երբ արդէն Հայաստանը խորհրդայնացել էր եւ կառավարութիւնը վայր էր գրել իր լիազօրութիւնները, Հայաստանի կառավարութիւնը կնքեց Ալեքսանդրապոլի պայմանագիրը:

Թուրքերն այս անգամ արդէն հրաժարուելով Խորհրդային Ռուսաստանի միջնորդութիւնից, շուապեցնում են կնքել Հաշտութեան պայմանագիրը, ակնարկելով, որ Հակառակ դէպքում կը շարժուեն Երեւանի վրայ: Հայաստանի կառավարութիւնը ուղղակի բանակցութիւնների մէջ մտնելով թուրքերի հետ, փորձեց ամէն գնով կանգնեցնել նրանց արշաւանքը, փրկել Հայաստանի մնացած ընակչութեանը կոտորածներից մինչեւ նոր կառավարութեան կազմուելը եւ Կարմիր Բանակի մուտքը Երեւան:

Թուրքիայի պարտադրանքով Հայաստանը հրաժարուեց Մերի դաշնագրից: Թուրքիային անցան Կարսի Մարզը եւ Սուլրմալուի Գաւառը: Վերջինս, ի

դէպ, երբեք չէր եղել Թուրքիայի կազմում: Նախիջեւանի մարզն անցաւ Թուրքիայի հովանու տակ, որն այնուհետեւ Մոսկուայի Պայմանագրով յանձնուեց Ալեքսանդրից: Հայ-թուրքական սահմանը դարձան Ախուրեան եւ Արաք գետերը:

1920ի թուրք-հայկական պատերազմը, թերեւս հայոց նորագոյն պատմութեան ամենաողբերգական էջերից է: Պարտուելով այստեղ, հայերը զրկուեցին թէ՛ իրենց պետականութիւնից, թէ՛ կորցրեցին հայկական հողերը մէկ միասնական պետութեան մէջ միաւորելով բացառիկ հնարաւորութիւնը, թուրքերին զիջեցին նորանոր տարածքներ, կրեցին նիւթական հսկայական վնասներ, այլեւ ցեղասպանութեան ենթարկուեց արեւելահայ մի խոչոր հատուած եւս:

Բացադրի ծանր հետեւանգներ ունեցաւ այս պատերազմը յատկապէս Ալեքսանդրապոլի Գաւառի բնակչութեան համար: Հայկական բանակի բարոյալքման պայմաններում թուրքերը, ռազմական գործողութիւնները գուգակցելով դիւնագիտական խարդաւանքներին, հեշտութեամբ գրաւեցին Ալեքսանդրապոլն ու Գաւառը: Զայայած 1921 Մարտի 18ի Մոսկուայի Պայմանագրով Ալեքսանդրապոլի Գաւառը մնում էր Հայաստանին, թուրքական բանակը կառչելով 1920 Դեկտեմբերի 2ի Ալեքսանդրապոլի Պայմանագրի առանձին կէտերից, մասնալորապէս Հայաստանի մաս ճանաչուած, բայց թուրքերի կողմից զինակալուած տարածքներին վերաբերող կէտից, ամբողջ վեց ամիս չհեռացաւ Ալեքսանդրապոլի Գաւառից: Միայն 1921 Ապրիլի 22ին ցեղասպանութեան ենթարկով արեւելահայութեան մի խոչոր հատուածի եւ մինչեւ վերջին հնարաւորութիւնը թալանելով եւ կոտորելով գաւառի բնակչութեանը նա լքեց տարածքը:

Թերեւս ամենաողբերգականն այս պատերազմում իր դարաւոր թշնամուն հաղ ու հացով՝ դիմաւորող Ալեքսանդրապոլի Գաւառի հայ գիւղացին էր եւ՝ Ալեքսանդրապոլի Յեղկոմն իր տիրահռչակ գործունէութեամբ¹⁰: Թուրքերը գործնականօրէն ապացուցելու համար, որ իրենց առաջնադարձումը պայմանաւորուած էր Խորհրդային Ռուսաստանի շահերով եւ նպատակ ունենալով խորհրդայնացման խաղաքարտն օգտագործելով գրաւել ամբողջ Հայաստանը, Ալեքսանդրապոլ մտնելու առաջնորդութիւնը տեղի բոլշևիկների միջոցով սկսեցին իրենց բոլշեկի լինելու մտայնութիւնը տարածել բնակչութեան մէջ¹¹:

Ալեքսանդրապոլի բոլշևիկները, փորձելով փրկել բախտի քմահաճոյքին մնացած բնակչութեանը թուրքական սարսափներից, համաձայնեցին Ալեքսանդրապոլում խորհրդային իշխանութիւնը հոչակելու թուրքերի առաջարկին¹²:

Ալեքսանդրապոլի կոմունիստները հաւատացած էին եւ բախտի քմահաճոյքին մնացած բնակչութեան էլ հաւատացնում են, թէ խորհրդային կարգերի հաստատումը կը փրկի նրանց թուրքական սարսափներից, քանի որ իրք-թուրքերի նպատակը միայն դաշնակցական կառավարութեան տապալումը եւ բանուորագիւղացիական իշխանութեան հաստատումն է¹³:

Զնայած կառավարութեան որոշմանը, թէ՛ թուրքերի կողմից Ալեքսանդրապոլ գրաւելու դէպքում քաղաքացիական վարչութեան անդամները, շրջանային ինքնավարութեան նախագահը, վարչութեան անդամները եւ բոլոր պաշտօնեաները, նոյեմբերի 5ի լուսաբացին նրանք թողնում են քաղաքը՝ մատնելով այս անշխանութեան կազմուելը:

Ստեղծուած իրավիճակում նոյեմբերի 5ի լուսաբացին բոլշևիկները, դուքս գալով բանտից, փորձում են իրենց ձեռքը վերցնել իշխանութիւնը: Սակայն Մեպոււ բոլշևիկներին սպառնում է ձերբակալութեան ար-

կաղրուած անցնուում են ընդյատակ: Այս ամէնից յետոյ միայն Զօր. Սիլիկեանի թոյլտուութեամբ ընտրուում է տասնհինգ հոգուց բաղկացած կոալիցիոն մարմին (ժողովրդականներից ու սոցիալ-դեմոկրատներից): Լեւոն Սարգսեանի գլխաւորութեամբ, որը պէտք է ձեռնամուխ լինէր քաղաքի գործերի կարգաւորմանը: Սարգսեանը նշանակւում է նաեւ Ալեքսանդրապոլում Հայաստանի կառավարութեան ներկայացուցիչ, իսկ խորհրդականներ նշանակւում են Ե. Միրաքեանն եւ Պ. Շերմագաննեանը¹⁶:

Ալեքսանդրապոլի իշխանութիւնները՝ Լ. Սարգսեանի գլխաւորութեամբ, փորձում են խանգարել թուրքերի եւ բոլցեւիկների յարաբերութիւնները, բայց դա նրանց չի յաջողուում։ Թուրքերը բոլոր գործերը կարգաւորում են բոլցեւիկների հետ՝ հեղինակազրկելով Սարգսեանի գլխաւորած կոալիցիոն իշխանութիւնը, եւ ի վերջոյ հասնում Ալեքսանդրապոլում խորհրդային իշխանութեան հաստատմանը¹⁶:

Հայաստանի Հանրապետութեան Ներկայացուցիչների հետ նոր զինադադար կնքելու բանակցութիւնները զուգակցւում են թուրքերի եւ բոլշեվիկների միջեւ ընթացող բանակցութիւններով։ Նոյեմբերի 17ին Ալեքսանդրապոլում ստեղծվում է խորհրդային իշխանութեան մարմին՝ յեղկոմ՝ յեղափոխական կոմիտէ¹⁷։

Թուրքերն Ալեքսանդրապոլում հռչակում են խորհրդային իշխանութիւն՝ նպատակ ունենալով իրենց ձեռքը վերցնել Հայաստանի խորհրդայնացման նախաձեռնութիւնը¹⁸: Պատահական չէ, որ նրանք Ալեքսանդրապոլի խորհրդային իշխանութիւնը ճանաչեցին այնքանով, որքանով այն պէտք էր իրենց մտադրութիւնները իրականացնելու համար: Այստեղ գործեցին միայն իշխանութեան այն մարմինները, որոնց միջոցով թուրքերն իրականացնում էին բնակչութեան թալանն ու բռնութիւնը¹⁹: Սասնաւորապէս նեղին Գործոց Բաժինն ու Արտակարգ Յանձնաժողովը իսկական պատուհաս դարձան թուրքական սարսափներն ապրող Ալեքսանդրապոլի Գաւառուի բնակչութեան գլխին: Թուրքերի կողմից իրականացուող բռնութիւնների ու թալանի քաղաքականութիւնն ուղեկցում էր յեղկոմի կողմից իրականացուող կտրուկ միջոցներով: 1921 Յունուարի 25ին միայն յեղկոմը, հասկանալով թուրքերի իսկական նպատակները, վայր դրեց իր իհագործութիւնները²⁰:

Թուրքական զինուորական հրամանատարութիւնը անմիջապէս ձեռնամուխ եղաւ տեղական իշխանութեան նոր մարմինների ձեւաւորմանը²¹

Նրանց աջակցութեամբ քաղաքային ոստիկանապետ Սերգէյ Մատինեանն իրեն հռչակեց քաղաքապետ (դիկտատոր), գրեթէ միաժամանակ կեանքի կոչուեցին քաղաքային ինքնավարութեան մարմինները՝ Քաղաքային Խորհուրդն ու Վարչութիւնը:

Այս դէպքերի լուսաբանումը լուրջ խնդիրներ է դրել հայ պատմագրութեան առջեւ։ Սակայն արխիտային նիւթի պակասը եւ իրադարձութիւնները գաղափարաքաղաքական նկատառումներով բացատրելու հանգամանքը հնարաւորութիւն չեն տուել հայ պատմաբաններին պատասխանելու վերոյիշեալ հարցերին։ Աւելին, համահայլական նշանակութիւն ունեցող այս հարցերի լուսաբանումը, որոնք ուղղակիորէն կապուած են «ինչո՞ւ ընկաւ Կարսր» հարցի հետ, յաճախ տեղայնացնում են, կապում անդրապոյցինների բնաւորութեան առջեւ։

թեան հետ։ Վերջիններս մեղադրուում են բոլշեվիկների եւ թուրքերի հետ համագործակցելու, նրանց դէմ չկոռուելու մէջ։

Մինչդեռ կարծում ենք այս հարցերի պատասխանը կարելի է ստանալ նախքան պատերազմը Ալեքսանդրապոլի գաւառում տիրող սոցիալ-տնտեսական, Հասարակական-քաղաքական, վարչա-իրաւական եւ բարոյա-Հոգեքրանական իրավիճակի ուսումնասիրութիւնից յետոյ միայն եւ թերեւս այլ՝ ընդհանրապէս Հայաստանի Հանրապետութեան քաղաքական ու կրթութիւնների նկատառման ներքոյ իրադարձութիւնների նման զարգացմանը մեծապէս նպաստեց նաև ստեղծուած միջազգային իրադրութիւնը: Մասնաւորապէս Խորհրդային Ռուսաստանի եւ Անտանտի Հակասութիւնները, որից այդքան վարպետորչն կարողացաւ օգտուել Թուրքական դիւնագիտութիւնը:

Ստորեւ ներկայացուող փաստաթղթերի հաւաքածուն նպատակ ունի գէթ մասամբ լրացնել այս շրջանի ուսումնասիրութեան աղբիւրագիտական բացը։ Հրատարակուող փաստաթղթերը ներկայացնում են Ալեքսանդրապոլի գաւառում ստեղծուած բացառիկ ծանր ընկերային-տնտեսական վիճակը, ինչպէս նաեւ 1918ի թուրքական արշաւանքի աւերածութիւնները յաղթահարելու, մեծաթիւ գաղթականութեանը սովոր գրկելու հրամայականի առաջ կանգնած տեղական իշխանութիւնների գործունէութիւնը։ Ներկայացուող փաստաթղթերը վկայում են տեղական կառավարութեան կողմից կազմակերպչական աշխատանքների, բնակչութեան կողմից թուրքական վտանգը զգալու եւ այն կանխելու փորձերի մասին։

Գաւառում տիրող հասարակական-քաղաքական եւ իրաւական դրութեան իրական պատկերը տալու առումով բացառիկ փաստաթուղթ է Ծիրակի նահանգապետ Կարծ Սասունու իրաւախորհրդատու Գէորգ Խոյեցեանի գեկուցումը նահանգապետին:

Փաստաթղթերը վկայում են նաեւ թուրքերի խարդախ քաղաքականութեան մասին:

Հրապարակուող փաստաթղթերը տպագրուում են առաջին անգամ, բնագրի լեզուով, կէտադրական եւ ուղղագրական որոշ շտկումներով։ Վերնագրերը մենք ենք դրեի՝ Համապատասխանեցնելով նիւթի բովանդակութեան։

Ա²³ Բոլոր փաստաթղթերը պահպանվում են Հայաստանի Ազգային Արխիվում:

ԱԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ՔԱՂԱՔԱԳԼՈՒԽ Հ. ՄԵԼքՈՆԵԱՎԻ²⁴
ԳՐՈՒԹԻՒՆԸ ՀՀ ԽՆԱՍԱՏԱՐՈՒԹԵԱՆ ՍԻՆԻՍՏՐԻՆ²⁵ ՔԱՂԱՔՈՒ
ՏԱՐԱԾՈՒԱՅ ՎԱՐԱԿԻՉ ՀԻՒՆԴՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ
22 Յունիարի 1920թ.

Հաղաքումս տարածուել են տարափոխիկ հիւանդութիւններ սպառնալի չափերով։ Համաձայն բժշկական ընկերութեան կարծիքի բոլոր դպրոցների աշակերտութիւնը արձակուած է մեկ շաբարով՝ հիւանդութիւնների դեմ կռուելու համար։

Ծուտափոյք հարկաւոր է մեկ միլիոն ռուբլի, խնդրում ենք փոխադրել էալիդեմիայի²⁶ առաջն առնելու համար:

ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ՔԱՂԱՔԱԳԼԽԻ ՏԵՂԱՊԱՀԻ
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ ՔԱՂԱՔԱՅԻ ԽՆՁԱՎԱՐՈՒԹԵԱՆ
ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻՆ՝ ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹԵԱՆ
ՎԿԱՅԱԿԱՆՆԵՐ ՈՒՆԵՆԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ

15 Ապրիլի 1920թ.

Երեւան

Համաձայն Ներքին Գործոց Մինիստրութեան Զինատրութեան գործերի զիսաւոր վարչութեան սթ Ասրտի 31-ի N 1435 գորութեամբ Վարչութիւնս սրանով յայտարարում է, որ քաղաքային ինքնավարութեան բոլոր 16-43 տարեկան հասակ ունեցող ծառայողները 7 օրուայ ընթացքում պարտաւոր են իրենց մօտ ունենալ վկայականներ կամ այլ փաստարդիք տրուած զինատրութեան ատեանների կողմից իրենց հասակի եւ զինուորական ծառայութեան վերաբերեալ յիշեալ ժամանակաշրջանում. որ ծառայողների մօտ որ չեն լինի յիշեալ վկայականները նրանց դէմ ճեռք կ'առնուի համապատասխան միջոցներ:

Քաղաքագլխի Տեղապահ Պարոյր Գէօնջեան²⁸
Քարտուղար <ստորագրութիւն>

Ք²⁹

ԽՆԱՍԱՏԱՐՈՒԹԵԱՆ ԵՒ ՎԵՐԱՅԻՆՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՐԱՐ³⁰
ԳՐՈՒԹԻՒՆԸ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԲԱԾԽԱՍԱՆ ԿՈՍԻՏԵՒՆ՝
ՆՊԱՍՏՆԵՐԸ ԿՐԱՍԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ

19 Ապրիլի 1920թ.

Երեւան

Աչքի առաջ ունենալով պետական ալիրի պաշարի քշութիւնը եւ որ դրսից այլևս նոր պաշար չի ստացուելու, յայտնում եմ Ձեզ ի գիտութիւն, որ Ալեքսանդրապոլի ամբողջ զաւառում եւ նրան կցուած մասերում (Թալինի շրջան, Արեմտեան Ծիրակ եւ այլն) այսուհետեւ ծրի նպաստ պիտի տրուի ըստ նորմայի (կէս ֆունտ) ոչ աւելի քան մի հարիր հազար անձի: Քաղաքի մէջ ոչ ոքի ծրի հաց չի տրուելու, իսկ դրամով ամբողջ քաղաքին, զաւառին, երկարուղային վարչութեանը եւ միւս բոլոր հիմնարկութիւններին մէկտեղ պէտք է տալ ոչ աւելի քան ինչսուն հազար (90000) անձի: Մինչեւ այժմ եղած բուերի կրծասումը եւ ներկայ գրութեան մէջ եղած շափերին հասցնելը բողնում է Ձեզ եւ գաւառական ինքնավարութեան վարչութեանը:

Խնամատարութեան եւ Վերաշինութեան Խախարար
<Ա. Քարալեան>
Դիանապետ

Դ³¹

ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ՔԱՂԱՔԱԳԼԽԻ ՊԱԾՕՆԱԿԱՏԱՐ
ՊԱՐՈՅՅ ԳԷՕՆՉԵԱՆԻ ՀԵՌԱԳԻՐԸ ԽՆԱՍԱՏԱՐՈՒԹԵԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹԵԱՆԸ³². ՔԱՂԱՔԻ ԶՔԱԽՈՐ ԲՆԱԿՈՒԹԵԱՆԸ ՃՐԻ
ՀԱՅ ԲԱԺԱՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ

20 Ապրիլի 1920թ.

Ալեքսանդրապոլ

Խնդրում ենք հեռագրով պատասխանել ինչ չքատրների է վերաբերում Զեր N 781418 հեռագիրը: Քաղաքում, քացի զանազան շրջանների գաղքա-

կաններից, ծրի հաց են ստանում Ալեքսանդրապոլ քաղաքի ազգաբնակչութեան չքատր դասը, թուով 9900 հոգի: Մինչեւ Ձեր հեռագրի ստանալը Խնամատարութեան Նախարարութեան տեղին ներկայացուցչի կարգադրութեամբ զաղթականութեանը տրուած է ժամանակ մինչեւ 25-ը Ապրիլի տեղափոխուել գիտերը, քացի արիստատարներից եւ հիմնարկութիւնների ծառայողներից: Որովհետեւ շուկայում ալիր չինելու պատճառով հացի ֆունտը ծախում է 60-70 դրամով, քաղաքացի բնիկ ազգաբնակչութեան չքատր դասին անհրաժեշտ է շարունակել քաց բողնել հաց նախկին կարգով:

Քաղաքագլխի Պաշտօնակատար՝ Պ. Գէօնջեան

Ե³³

ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ՔԱՂԱՔԱԳԼԽԻ ՊԱԾՕՆԱԿԱՏԱՐ ՊԱՐՈՅՅ
ԳԷՕՆՉԵԱՆԻ ՀԵՌԱԳԻՐԸ ՊԱՆԱՍԵՆՏԻՆ, ԽՆԱՍԱՏԱՐՈՒԹԵԱՆ ԵՒ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՆ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ
ԲՆԱԿՈՒԹԵԱՆԸ ՀԱՑՈՎ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ

27 Ապրիլի 1920թ.

Ալեքսանդրապոլ

Կառավարչական պահեստում ալիրի պակասելու պատճառով եւ նոր ալիրի ուշանալու շնորհի ամերիկական կառավարութեան ներկայացուցչի կարգադրութեամբ³⁴ քաղաքում փողով հաց ստացող ժողովրդին պարեն տալը ժամանակատրապէս դադարեցւում է: Այդ առքի այսօր առաւօտուց մինչեւ ուշ գիշեր քաղաքի բազմահազար ազգաբնակչութիւնը դիմելով քաղաքային վարչութեանը եւ բաշխման կոմիտէի շենքը, կտրուկ կերպով խնդրում է եւ պահանջում կառավարութիւնց հացի բաշխումը շարունակել ի նկատի առած շուկայում մասնաւոր հացի բացակայութիւնը, որի շնորհի վերջին մի շարաբույ ընթացում հացի գինը 40 դրամուց բարձրացել է 60-70 դրամու, իսկ այսօր մինչեւ 100 դրամի եւ այս էլ չի ճարտում:

Ալեքսանդրապոլի շրջանը եւ քաղաքի ազգաբնակչութիւնը դեռ խաղաղ ժամանակ էլ տնտեսապէս վատ դրութեան մէջ էր՝ համեմատած միա վայրերի հետ, իսկ ներկայում գտնուում է ճգնաժամային դրութեան մէջ շնորհի տաճկական բանակի աւերածութիւնների³⁵ եւ մի շարք աննպաստ պայնանների, որոնք թոյլ չէին տախս ժողովրդին վերականգնելու քայլայուած տնտեսութիւնը: Այսօր երեկոյեան բազմանարդ հասարակական ժողովը ներկայութեամբ գինուորական, խնամատարութեան, ֆինանսների, ներքին գործոց նախարարութիւնների, զաւառական գենստուոյի³⁶, քաղաքային վարչութեան ներկայացուցիչների եւ ժողովրդի ընտրուած ներկայացուցիչների որշեց դիմել Ձեզ հետեւեալ խնդրիներով՝ առաջին, դիմել ամենակտրուկ միջոցների ալիրը իր ժամանակին տեղ հասցնելու նպատակով. երկրորդ, դիմել ձեր միջոցով ամերիկական կառավարութեան ներկայացուցչին բաց բողնելու վարով հաց ստացողների ալիր. երրորդ, ժամանակատրապէս յնտաճգի խնամատարութեան մինիստրութեան կարգադրութիւնը զաղթականութեանը եւ բնիկ քաղաքացի չքատրների հացը դադարեցնելու վերաբերեալ մինչեւ զաղթականութեանը մաս-մաս Ղարահ շրջան փոխադրելը եւ քաղաքի ամենածարայեղ չքատրների վերջնական ցուցակները կազմելը, չորրորդ, երես հեռաւոր է վերացնել Ալբարայի³⁷ շրջանում մասցուների եւ այլ կենսամթերքների գնումների արգելումը համաձայն մինչինին³⁸ կարգադրութեան: Ի նկատի առած մոմենտի լրջութիւնը եւ մի շարք տեղական պայմանները, օրի-

382

383

նակ զինակոչի հարցը, ապագայ բարդութիւնները կանխելու համար կառավարութեան եւ ժողովրդի շահերի տեսակէտից անհրաժեշտ է առաջին երեք կետերի վերաբերեալ անել շուտափոյթ կարգադրութիւն եւ որի մասին խնդրում ենք տեղեկացնել հեռագրով:

Ի դիմաց ժողովականների
քաղաքագլխի պաշտօնակատար՝ Պ. Գէօնջեան

Զ³⁹

ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԲԱՇԽԱՄԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԳԱՀԻ ՀԵՌԱԳԻՐԸ ՀՀ
ԽՆՍՍՍՏԱՐՈՒԹԵԱՆ ԵՒ ՎԵՐԱԾԻՆՈՒԹԵԱՆ ՄԻՆԻՍՏՐԻՆ՝
ԲՆԱԿՉՈՒԹԵԱՆ ՊԱՐԵՆԱՅԻՆ ԾԱՆՐ ԴՐՈՒԹԵԱՆ ՍԱՍԻՆ
22 Մայիսի 1920թ.

Ալեքսանդրապոլ

Երկրորդ ամիսն է ժողովրդին պարեն չի տրտում: Չքատր դասակարգը կերակրում է կանաչով⁴⁰: Եղել են սովամահութեան շատ դէպքեր: Խնդրում ենք միջոցներ ծեռք առնել շտապել պարեն հասցնել ժողովրդին, սովից ազատելու համար:

Միհրան Գրիգորեան⁴¹

Է⁴²

ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ՔԱՂԱՔԱԳԼԽԻ ՊԱՇԽԱՆԱԿԱՏԱՐ
ՊԱՐՈՅՐ ԳԵՌԱԶԵԱՆԻ ՀԵՌԱԳԻՐԸ ՀՀ ԽՆՍՍՍՏԱՐՈՒԹԵԱՆ ԵՒ
ՎԵՐԱԾԻՆՈՒԹԵԱՆ ՄԻՆԻՍՏՐԻՆ՝
ԲՆԱԿՉՈՒԹԵԱՆ ՊԱՐԵՆԱՅԻՆ ԾԱՆՐ ԴՐՈՒԹԵԱՆ ՍԱՍԻՆ

27 Մայիսի 1920թ.

Ալեքսանդրապոլ

Քաղաքում գտնուող ազգաբնակչութեանը, գաղքականութեանը, քաղաքի շքատր դասին եւ հիմնարկութիւնների ծառայող խմբին պարենը դադարեցուած է: Ժողովուրդը սովորական դրութեան մէջ է: Խնդրում ենք ծեր հեռագրական միջնորդութիւնը ուր հարկն է, որ կարգադրուի տեղական Ամերիկեան Կոմիտեին բաց քողմել ալիրի փոխարէն լորի, բրինձ կամ ուրիշ մքերը, մինչեւ նոր ալիրի ստացուելը: Ծովայում հաց քոլորովին չկայ:

Քաղաքագլխի Պաշտօնակատար՝
Գէօնջեան

Ը⁴³

ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ՔԱՂԱՔԱԳԼԽԻ ՊԱՇԽԱՆԱԿԱՏԱՐ
ՊԱՐՈՅՐ ԳԵՌԱԶԵԱՆԻ ՀԵՌԱԳԻՐԸ ՀՀ ԽՆՍՍՍՏԱՐՈՒԹԵԱՆ ԵՒ
ՎԵՐԱԾԻՆՈՒԹԵԱՆ ՄԻՆԻՍՏՐԻՆ՝
ԲՆԱԿՉՈՒԹԵԱՆ ՊԱՐԵՆԱՅԻՆ ՕՐՀԱՍՏԱԿԱՆ ԴՐՈՒԹԵԱՆ ՍԱՍԻՆ

29 Մայիսի 1920թ.

Ալեքսանդրապոլ

Քաղաքում գտնուող հասարակութիւնը, հիմնարկութիւններն ու քանտերը, հիանդանոցները, քանուրութիւնը մնացել են առանց պարենի: Դրութիւնն օրհասական է: Ժողովուրդը մի քանի օր է կանաչով է ապրում: Երկրորդ անգամ է խնդրում ենք Ձեր միջնորդութիւնը [միջամտելո] տեղական Ամերիկեան Կոմիտեին՝ բաց քողմել 7 օրուայ համար 1 ֆունտով լորի կամ բրինձ՝ որբանոցների⁴⁴ պաշարից, մինչեւ ալիրի ստացուելը: Սպասում ենք հեռագրական կարգադրութեամ:

Քաղաքագլխի Պաշտօնակատար՝
Գէօնջեան

Թ⁴⁵

ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԲԱՇԽԱՄԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԳԱՀԻ ՀԵՌԱԳԻՐԸ
ՀՀ ԽՆՍՍՍՏԱՐՈՒԹԵԱՆ ԵՒ ՎԵՐԱԾԻՆՈՒԹԵԱՆ ՄԻՆԻՍՏՐԻՆ՝
ԲՆԱԿՉՈՒԹԵԱՆ ՀԱՅ ԲԱՇԽԱՄԱՆ ՄԱՍԻՆ

15 Յունիսի 1920թ.

Ալեքսանդրապոլ

Ձեր հեռագրական կարգադրութեամբ Բաշխման Կոմիտեն Ալեքսանդրապոլ քաղաքում եւ շրջանում հաց պէտք է քաշխի փողով 50000 անձի: Խնդրում ենք հեռագրով պարզել, որ այդ բոլոր մէջ չեն մտնում Հայաստանի ամբողջ երկարուղային գծի բոլոր ծառայողները եւ ընտանիքները, որոնց թիվ հասնում է մինչեւ 32000 եւ որոնք ալիր ստանում են Ալեքսանդրապոլի Բաշխման Կոմիտեից: Քաղաքային վարչութիւնից հաց ստանում են փողով բոլոր պետական եւ հասարակական ծառայողները, դրանց թում՝ քաղաքային, գաւառային նահանգական միլիցիան՝ թում 15000 հոգի: Չքատր բնիկ ազգաբնակչութիւն 4500 անձ, գաղքականներ 5300 անձ, միջին դասը 19000 անձ, ընդամենը՝ 47000 անձ: Ունետրներին հաց չի տրտում: Քաղաքում ծրի հաց ստացող չկայ: Եթէ ամբողջ երկարուղին մտնի Ձեր հեռագրած 50000-ի մէջ, այդ դէպքում քաղաքի ազգաբնակչութիւնը կը մնայ առանց հացի: Ծովայում հաց դժուարութեամբ է ճարտում, այն էլ ֆունտով 180-200 րուրլով: Խնդրում ենք Ձեռ հեռագրական կարգադրութիւնը:

Միհրան Գրիգորեան

Ճ⁴⁶

ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ՔԱՂԱՔԱԳԼԽԻ ՊԱՇԽԱՆԱԿԱՏԱՐ
ՊԱՐՈՅՐ ԳԵՌԱԶԵԱՆԻ ԵՒ ՆԱՀԱՆԳԱՊԵՏԵՍ ԿԱՐՈ ՍԱՍՈՒՆՈՒ
ՀԵՌԱԳԻՐԸ ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏԻՆ⁴⁷. ՊԱՏճԵՆԸ ԽՆՍՍՍՏԱՐՈՒԹԵԱՆ ԵՒ
ՎԵՐԱԾԻՆՈՒԹԵԱՆ ՄԻՆԻՍՏՐԻՆ՝
ԲՆԱԿՉՈՒԹԵԱՆ ՊԱՐԵՆԱՅԻՆ ԾԱՆՐ ԴՐՈՒԹԵԱՆ ՍԱՍԻՆ

24 Յունիսի 1920թ.

Ալեքսանդրապոլ

Ամերիկական կոմիտեն յայտնեց [թէ] ալիր չկայ: Եթէ մինչեւ ամսոյս 26-ը նոր ալիր շտացուի ստիպուած ենք դադարեցնել բոլոր պետական, հասարակական հիմնարկութիւններին, գաղքականութեանը, շքատր ազգաբնակչութեան հացի բաշխումը: Ծովայում հաց չկայ, դրութիւնը օրիասական է: Խնդրում ենք Ձեր շուտափոյթ միջնորդութիւնը ուր հարկն է բաց քողմել մինչեւ նոր ալիրի ստացուելը, գոնե մի շաբաթով տեղիս ամերիկեան պահեստներից՝ բրինձ կամ լորի: Վերջին գնացքը 14 վագոն ալիրով Ղարաբիլսայի շրջանի քաղցած ազգաբնակչութիւնը բոյլ չի տուել անցնել Ալեքպոյ⁴⁸: Կարգադրեցէք ամերիկացիների միջոցով ուղարկել շտապ կարգով 6-7 վագոն Ղարաբիլսայի ալիրից, թէեւ յոյս չկայ, որ այդ ալիրը մնացած լինի:

Նահանգապետ՝ Կարօ Սասունի⁴⁹

Քաղաքագլխի պաշտօնակատար՝ Գէօնջեան

ԺԱ⁵⁰

**ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ՔԱՂԱՔԱԳԼԽԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ
ՊԱՐՈՅՐ ԳԵՌԱՋԵԱՆԻ ՀԵՌԱԳԻՐԸ
ՀՀ ԽՆԱՍԱՄԱՐՈՒԹԵԱՆ ԵՒ ՎԵՐԱՇԽԱԼՈՒԹԵԱՆ ՄԻՆԻՍՏՐԻՆ՝
ԲՆԱԿՉՈՒԹԵԱՆ ՊԱՐԵՆԱՅԻՆ ԾԱՆՐ ԴՐՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ**

25 Յունիսի 1920թ.

Ալեքսանդրապոլ

Երկու ամսից աւելի Ալեքսանդրապոլի բոլոր հիմնարկութիւնների ծառայութեանը, զարդարականութիւնը, շատոր ազգաբնակչութիւնը [սնունդ] ստանում է մի քառորդ փունտի հաշուով, այն ինչ Երեւանում, Ղարսում նրանք շարունակ ստացել են կես ֆունտ: Դրութիւնը ծանր է: Խնդրում ենք կարգադրել բաշխումին⁵¹ դրանից յետոյ բարձրացնել կես ֆունտ, ինչպէս միս տեղերում: Պահեստում ալիր չինելու պատճառով խնդրում ենք Ձեր միջնորդութիւնը մինչեւ նոր ալիրի ստացուելը բաց բոլոնել տեղիս ամերիկեան պահեստներից համապատասխան քանակութեամբ բրինձ կամ լորի, որով ազատած կը լինենք ծառայողներին, ազգաբնակչութեանը տվածահութիւնից: Երեւ մինչեւ ամսիս 26-ը լորի կամ բրինձ չստանանք պարենի բաշխումը դադարեցում է ալիր չինելու պատճառով: Սպասում ենք հեռագրական կարգադրութեան:

Քաղաքագիտ պաշտօնակատար Գէօնջեան

ԺԱ⁵²

**ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԳԱՐԱՌԱԿԱՆ ԽՆԱՍԱՎԱՐՈՒԹԵԱՆ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՀԵՌԱԳԻՐԸ ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏԻՆ.
ՊԱՏՃԵՆԸ ԽՆԱՍԱՄԱՐՈՒԹԵԱՆ, ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ,
ՆԵՐՁԻՆ ԳՈՐԾՈՑ ՄԻՆԻՍՏՐՈՒԵՐԻՆ.⁵³
ԱԶԳԱԲՆԱԿՉՈՒԹԵԱՆԸ ՕԳՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ**

Յունիսի 1920թ.

Ալեքսանդրապոլ

Երկրագործական աշխատանքների այս եռուն շրջանին, երբ սկսել են գաւառում խոտի հաւաքում, այդ ծանր աշխատանքներին գաւառիս ժողովուրդը սովորական են ենքարկուել: Հիւծուած, քաղցած գիտացիները անկարող են աշխատանք կատարել: Մեռնողների թիւը քանի գնում աւելանում է, աշխատանքները մնացել են երեսի վրայ ընկած: Երեւ շուտափոյք օգնութիւն շխացողի, ժողովուրդն իր աշխատանքի պտուղը չի վայելելու, խորտերն ու հացերը կը մնան անքաղ: Ալեքսանդրապոլի տեղավարական խորհուրդը խնդրում է ինչ միջոցով էլ որ լինի շտապով օգնութիւն հասցնել մեզ պատրաստ ամէն տեսակի եւ ծերի փոխառութեան հացով, մինչեւ մեր հունձը:

Նախագահ՝ Միրզոյեան

ԺԳ⁵⁴

**ԵՒՐԱԿԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏ ԿԱՐՈ ՍԱՍՈՒՆՈՒ ԻՐԱՒԱՆՈՐՀՐԴԱՏՈՒ
ԳԵՈՐԳ ԽՈՐԵՑԵԱՆԻ⁵⁵ ԶԵԿՈՒՑՈՒՄ ՆԱՀԱՆԳԱՊԵՏԻՆ.
ՆԱՀԱՆԳԻ ԴՐՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ**

Յուլիս 1920թ.

Ալեքսանդրապոլ

Արդէն մի ամսի է, որ Ձեզ մօտ վարում եմ իրաւախորհրդատուի պաշտօնը: Սի ամսը թիւ է նահանգի դրութեան եւ բոլոր հիմնարկութիւնների գործունէութեան հետ մօտ եւ մանրամասն ծանօթանալու համար, սակայն կարծու

եմ, որ քարական է որոշ պատկերացում եւ ընդիանուր գաղափար կազմելու համար:

Արդ, նահանգի դրութեան կառավարումի անթերի քննադատութեան եւ գործունէութեան լրի ծրագիրը տալու յաւակնութիւնը չունենալով թոյ եմ տալիս ինձ գեկուցելու սուկ տեղական եւ համապետական բնոյք կրող մի քանի թերութիւնների [մասին], որքան հետք էր նկատել մի ամսուայ ընթացքու:

Զեկուցումն կազմելիս ի նկատի եմ ունեցել, որ քաջի նահանգապետ լինելուց անդամ էր Հայաստանի Պարլամենտի, նաև Ձեր դիրքը պետական կուսակցութեան եւ տաճկահայ մի կարեւոր հատուածի մէջ, հակառակ պարագային, որոշ խնդիրների յարուցումը անշուշտ կարող էր տարօրինակ եւ անտեղի բուալ:

Ուսական մեծ յեղափոխութեանը անմիջապէս յաջորդեց թշնամու ներխուժումը մեր երկրի սահմանները, ազգի բոլոր ուժերի լարումը՝ դիմադրելու, խուճապ, հերոսամարտ, ներքին՝ պետութեան ու պետականութեան խլսումները, ընդվզումներն ու դաւադիր գործունէութիւնը երկրի ներսում ու նրանց զապելու գերմարդկային ճիգերը: Այդպիսի դժնղակ, անօրինակ պայմանների մէջ, երբ վլչում, քանդում էր հին պետական մեխանիզմը, հնի հետ սերտի կապուած շատ օրէնքները ու դրութիւններ նոր պայմաններին ներհակ ու անպատեկութիւն էր աներկայացնելու: Երբ անհրաժեշտ էին շտապ ու կտրուկ միջոցներ՝ աղետը կանգնեցնելու եւ ընկրկելու, բնական է, որ միանգամայն անյարնար օրէնքների հետ յաճախ պիտի կտարուեին եւ այնպիսին ներխուժութանը չհանդիսանալով հանդերձ՝ օգտակար պիտի հանդիսանային գոնեն մինչեւ նորերու փոխարինուելը: Եւ ի վերջոյ պիտի հասնէինք մի դրութեան, երբ օրէնքներն ընդհանրապէս պիտի անտես առնուեին: Սակայն ինչ հասկանալի ու ներելի էր այս ժամանակ, անհանդուրժելի է դանում այժմ երկամեայ պետական կեանքից յետոյ պետութեան մեր անհամենատ կայուն դրութեան մէջ, երբ որոշ հնարատրութիւն կայ օրէնքների եւ իրաւունքների կիրառութեան եւ նորերի մշակման:

Արդ անհրաժեշտ է անհողողող եւ անընկրկելի կանգնել օրինականութեան եւ իրաւաբանութեան ճամփի վրայ, անշեղ կիրառել գոյութիւն ունեցող բոլոր օրէնքները: Ամէն մի կամայական քմահաճ կարգադրութիւն, օրինազնութիւն, երեւ նոյնիսկ ժողովովի շահն ու օգուտը ի նկատի ունի այն, անթելու քաղաքացիների իրաւակարգի իրաւունքի գիտակցութիւնն ու ըմբռնումը, դրու քանալու նորանոր չարամիտ իրաւախախտումների եւ ապօրինութիւնների՝ անպայման կորստաբեր է հանդիսանալու մեր պետականութեան եւ ազգի շահերի: Անշահ, ապաժամ վնասակար օրէնքները պիտի փոխել տաւ սակայն քանի օրինական ծեսով չեն վերացուած՝ պակաս վնասակար են, քան բարեմիտ կամայականութիւնները:

Մեկնելով այս ընդիանուր կտիցից եւ մեր երկրի ներկայ դրութեան ըմբռնումից, մատնանիշ պիտի անեմ այն՝ ինչ իմ կարծիքով անհրաժեշտ է այժմ իսկ ծեսնարկել:

1. Նահանգապետը՝ տեղում հանդիսանում է միակ ներկայացուցիչը կառավարութեան, իր մէջ է անփոփու իշխանութեան ամբողջականութիւնը, նրան են ենթարկուում բոլոր նահանգում գործող հիմնարկութիւններն ու վարչութիւնները, քաջի զուտ օրական ու դատաստանական, որոնք սակայն օժանդակիչ են քաղաքացիական իշխանութեան, որն իր հերթին նրանց վրայ է

յետում իրաւակարգի պահպանման գործում: Մինչդեռ մեզ մօտ միանգամայն հիմքիշխան են են Ֆինանսների եւ Երկրագործութեան եւ Աշխատանքի եւ միև նախարարութիւնների ներկայացուցիչները: Նրանցից ամէն մէկն ունի իր սեփական քաղաքականութիւններն ու գործելակերպը, որով ստեղծում են մի աններդաշնակ, քառային դրութիւն, խախտում միօրինակարգ հանրապետութեան զանազան մասերում, եւ շատ անգամ իրենց ձախող ընթացքով ջոայնացնում հասարակութեանը ու դժգոհութիւն առաջացնում կառավարութիւնը՝ տիրող կարգերի դէմ:

Բազմիշխանութիւնն է տիրում նաեւ նահանգապետին ենթակայ վարչական օրգանների մէջ, նրանցից ոչ մէկը չի ճանաչում իր պարտականութիւնների ու իրաւունքների սահմանը, իրաւասութիւնների ընդհանուր շփոր է տիրում: Նահանգական, գաւառական, քաղաքային միլիցիոններ, պարետ, երկարուղու միլիցիապետ, տեսուչ, միլիցիայի եւ այլն, եւ այլն, սրանցից ամէն մէկը յաճախ ծեռնամուխ է լինում միայի իրաւասութեան ենթակայ խնդիրների, շատ անգամ էլ զանց առնում իրենը: Անհրաժեշտ է վերջ տալ այս շփորին եւ ճշգրտութէն գծել իրաքանչիւրի պարտականութիւնների եւ իրաւունքի շրջանակը: Կարեւոր եմ համարում ընդգծել երկու օրինակ:

1. Քաղաքային քրեական խուզարկու միլիցիայի հետ միաժամանակ քաղաքում գործում է նաեւ նահանգականը: Նահանգական միլիցիան ժամանակաւոր բան է, պայմանատրուած՝ զօրքի ռազմաճակատներում գտնուելու եւ երկրում յուզունների ու խոշոր անկարգութիւնների հնարաւորութեան հետ: Ուստի կարեւոր եմ զտնում ուժեղացնել Քաղաքային Քրեական Միլիցիան եւ խուզարկութեան գործը վերապահել միայն վերջինիս:

2. Անհրաժեշտ է արտաքել բոլոր յանցագործ տարրերը միլիցիայի շարքերից, մոցնել զօրանոցային կեանք եւ դասընթացներ իիմնել միլիցիաների համար, ուր նրանց կը ծանօթացնեն իրենց պարտականութիւնների եւ իրաւունքների հետ: Խստ միջոցներ ծեռ առնել այն բիրտ ու կոպիտ վարմունքի դէմ, որ ունեն մեր միլիցիոններից շատերը քաղաքացիների հանդէպ: Հիմնել քաղաքական հետապնդում, որը այժմ պատահական, անխստել եւ շփոր բնոյք է կրում եւ գրորկ է արդինաւորութիւնից, եւ այդ ներկայ պայմաններում, երբ մեր պետութեան ազատութեան ներքին եւ արտաքին թշնամիները, մեր պետութեան կործանման համար անորու աշխատանք են գործ դնում մտքելը յուզելու, ժողովրդի ոգին տարրալուծում: Ուժեղ հսկողութիւն սահմանել հեռագրատանը, անհրաժեշտ է երկարուղային եւ սահմանապահ պահակները հանրային ապահովութեան խնդրում անպայման ենթարկուեն Պ. նահանգապետին:

Աւելորդ չեմ համարում այստեղ շօշափել մի խնդիր, որ համապետական նշանակութիւն ունի: Քոլշենիզմի գլխաւոր վտանգն ու ոյժն միաժամանակ, որ նրան առժամանակ անյառելի է դարձել, [այս է, որ] նրա վարակիչ յատկութիւնները ամէն մի պայքար նրա դէմ լծորդուած է եւ մարտնչողների վարակման վտանգի հետ⁵⁶: Եւ մինչ ամէն մի համաճարակի երեւալու պէս միջոցներ են ծեռ առնւյուն քաղաքացիներին այդ ախտի դէմ հակարոյն ներարկելու, այս ամէնից մեծ ու իր հետեւանքներով աղէտալի համաճարակի դէմ ոչ միջոց չեմ ծեռ առնում: Ոչ միայն գաւառում, այլ քաղաքներում ուր հոծ ինտելիգենցիա եւ հասարակական գործիններ ունենք, չի մոտ յարատել ու ժրագուած պրոպագանդա, չեմ ներկայացնում ու բացատրութիւններու վերաբերութեան համար կարգավորութիւնների մէջ:

այն հետեւանքները, որ պիտի ունենայ բոլշեվիկների ներխուժումը, չի ծանօթացում քստմնեցուցիչ ու սարսուռ ազդող դժոխային կարգերի ու տեսութեան դէմ, որի մէջ տառապանքով մեռնում, ամայանում է Ռուսաստանը:

Թերբեր կարդալու հնարաւորութիւն միայն առանձին անհատներ ունեն, դասախոսութիւնները վճարովի են եւ կրկին քերին մատչելի, հասարակութեան լայն խաւերը, որոնք աւելի են մատչելի բոլշեվիզմի վարակին, զորկ են այդ ամէնից: Ամէն կերպ աշխատել ժողովրդի լայն մասամբները իրագել անել իրերի ու քաղաքական ռազմական դրութեանը: Այդ ամէնը ժողովուրդն իմանում է այս կամ այն ձեւով, ժողովուրդը իմանում է միայն այլանդակուած ու աղաւաղուած կերպով:

Այս անօրինակ անփութիւնն յանցագործութեան հաւասար է, մեր կուսակցութիւնները, մանաւանդ Դաշնակցութիւնը մեծապէս դատապարտելի են այս գործում: Ժամանական է իր ձեռքում պահելու երկրի ընդհանուր դեկավառութիւնն ու հսկողութիւնը, ազատել կուսակցական կարող գործիչներին, զազափարական պայքար մղելու եւ ժողովրդի քաղաքական զարգացման գործին նուիրուելու: Տիրող կուսակցութեան չպատկանող, հայ պետականութիւնն ընդունող տարրերն էլ կը զգան, որ իրենք այս երկրի խորք զաւակները չեն, ու ժողովուրդն էլ կ'ազատուի այն մտածողութիւնից, թէ հայ հանրապետութիւնը միայն Դաշնակցութեանն է պատկանում: Այս կտում դժբախտարար, մեծապէս յանցաւոր են իրենք՝ դաշնակցականները, որ ամէն տեղ նոյնիսկ իրենց կուսակցական օրգաններուն մեր ցեղի ու երկրի կոիր իրեր է կամ Դաշնակցութեան եւ պատկանութեան եւ բոլշեվիզմի, Դաշնակցութեան եւ Մուսաւաթի⁵⁷ եւ այլն պայքար են ցուցադրում:

Աշխատելով բարձրացնել կուսակցութիւնը ակամայ խորտակում են պետականութեան հիմունքները:

Ու միայն այս խնդրում չէ, որ կուսակցութիւնն ու պետականութիւնն իրար են խանութ: Երկրի կառավարութեան ու մարմինների գործունեութեան ամէն մի քայլափոխին կուսակցութեան շահերին տիաս կերպով մօտենալու ու անպատախանատու մարդկանց միջամտելը զգացում է ամէնուրեք: Շատերն օգտուում են կառավարչական դեռ անկազմակերպ վիճակից, անպատիծ են մնում այնպիսի գեղծումների ու օրինազանցութիւնների համար որոնց մի չնշին մասը բաւական կը լինէր եւ դատելու եւ դատապարտելու: Սոմենտի անհրաժեշտ պահանջն է պետութեան եւ կուսակցութեան բաժանումը:

Երկրի ցաւոտ խնդիրներից մէկն է նաեւ Տաճկահայ հասուածի բռնած դիրքը մեր պետականութեան հանդէպ: Նրանց զինուած չէզորութիւնը, զինուորական ծառայութեան չենթարկուելը, մասնաւոր անհատների հեղինակաւորութիւնը ի վնաս պետականի, երկրի օրենքների ամստես առնելը, շատ անգամ կառավարչական գործում՝ իրեր պետական պաշտօնեայի արտօնութիւնները, ջլատելը հայութեան երկու հատուածների միջեւ մի եւ ընդհանուր հայրենիքի ու ազգութեան զաղափարը, մեծապէս վնասում եւ վնասելու են ոչ միայն ներկայ այլն Միացեալ Հայաստանի կազմակերպման եւ յարատեւութեան⁵⁸:

Ամէնալուրջ ուշադրութեան առարկայ պիտի դառնայ նաեւ «քարարական հարցը» մեր հայրենիքում:

Ամէն մի հայի ու քարարի համար անպայման ցանկալի պիտի լինի այս ժողովուրդների ցար ու ցրի եկած մասերի համախմբումն ու զսումը այլացն

տարրերից: Սակայն այդ չպիտի տեղի ունենայ այնպիսի միջոցներով, որոնք ամէնեւին չնպաստելով գործին, միայն թշնամանք, վլրժխնդրութեան զգացմունք, դժգոհութիւն են յարուցանում մեր դէմ:

Չանչ մեր հարեւան մահմեղական պետութիւնների սահմանները փակ են, այնտեղի հայութեան արտազադրը եւ մեր բուրքութեան դէպի այդ երկիրները ներգաղթից առաջ, մենք պիտի ամէն ջանք գործ դնենք - իհարկէ խօսր այն երեւոյթների ու դէպքերի մասին չէ, երբ մեր հանրապետութեան գոյութիւնը ներկայ կամ հնարաւոր ապագայ վկանգին են ենթարկուում - որ տեղական մահմեղականների մէջ քինախնդրութիւն ու դժգոհութիւն զարդեցնենք՝ այսօրուայ բոյլ թշնամին վայր երկրի կրիստիկական վայրկեանին միանալով դրսի թշնամի ուժերի հետ, կարող է ճակատագրական հարուած հասցնել մեզ: Պայտի մոռանանք, որ ընդհանրապէս գիտացուն, թէ հայ թէ բուրք եւ գոն պահելու համար շատ քան հարկաւոր չէ՝ կեանքի, գոյքի ու պատուի ապահովութիւն: Եթէ այսօր բուրք գիտացիութիւնը, շատերը նաև հայերից տենչուն են Նիկողային⁵⁹- Ռուս տիրապետութեանը, այդ միայն՝ վերեւ յիշուած ապահովութիւնների համար: Տուէք նրան այդ երեքը, նա ուրիշ տիրապետութիւն չի ցանկանայ:

Ես անտես չեմ առնում նրանց կրօնական մոլեռնադրութիւնը, պանիսամիստների ազդեցութիւնը: Դրանց դէմ մի միջոց կայ միայն մեր երկրի եւ հարեւան մահմեղական պետութիւնների միջեւ ապրող հայերի փոխանակութիւնը կատարել, սակայն մինչ այդ չպիտի ուժեղացնել ու քազմացնել առանց այդ էլ մեր բազում թշնամիների շարքը:

Մինչդեռ մենք մի կողմից անօգուտ եւ ոչ մի նպատակի շծառայող անապահով կացութիւն ենք ստեղծում Աղքարայի բուրքերի համար, որը ոչ ուղիղ հասկացողութեամբ, կարող էր բուրքութեանը մեր երկրից քաշուեն արագացնել, միս կողմից սակայն ստեղծել ենք մի կացութիւն, ուր մի Քիրքալու Մահմէդ, որը հեղինակն է եղել Աղքարայի ըմբուտացման⁶⁰, այժմ էլ անհասկանակի կերպով հանդիսանում է մեր այդ շրջանում ինքնիշխան տէր՝ դատավարութիւն կատարում, պատժում, վարձատրում, նպաստում նոյնիսկ հայի կողմից թալանուած ու զրկուած բուրքին, ու այսպիսով այդ շրջանը դառնում է անհաղորդ մեր պետական կեանքին, ինքնամփոփ մի մարմին, որը իւր կազզ մեր պետութեան հետ տեսնում է միայն մեր պաշտօնեաններին սիրաշահելու, նոյնաբերութիւնների մէջ, նկատում իրեն ժամանակաւոր մի մասը մեր երկրի, բռնադատուած մի շուկայ Ֆինանսների Նախարարութեան ներկայացուցի զնումների, արտահանութիւն է կատարում միայն Վրաստան ու ժողովրդի մէջ կուտակում է անբարականութիւնը դէպի մեր պետականութիւնը, որի օրէնքների[ց] եւ այլ բարիքների[ց] նա անմասն է:

Կարեւորագոյն խնդիրներից մէկն էլ պաշտօնեութեան խնդիրն է, պաշտօնեութեան նիրական անապահով կացութիւնը: Պաշտօնեութեան բազմաթիւ զեղծարարութիւնները: Այս երկու խնդիրները սերտորեն շաղկապուած միասին, մեծապէս ազդում են երկրի ընդհանուր, եւ մասնաւորապէս տնտեսական, ֆինանսական դրութեան վրայ, ստեղծելով մի կախարդական շրջան:

Կառավարութիւնն ստիպուած պարբերաբար մեծացնում է նրանց ուժիկը, դրան անմիջապէս յաջորդում է մթերքների զների աճումը, ու

այսպիսով անհնարին դառնում պաշտօնեայի համար թիշ թէ շատ տանելի, բարեկեցիկ ու նիրապէս ապահով կեանքի ստեղծումը:

Մարդկային ոգուն յատուկ բնական ընչափրութիւնը, ուոճացած պատերազմի տարրալուծուող ներգործութեան հետեւանքով՝ միանում է այս անապահով կացութեանը եւ որոշակի ազդում զեղծումների բնական, կենցաղական ու սովորական երեւոյթ դառնալու[ն]:

Պետական ու հասարակական գոյքը⁶¹:

Մթերքներն ու պահեստները բալանում են անխնայ, կաշառակերութիւնը անսահման չափեր է ընդունում, ախորժակներն աւելի ու աւելի են գրգուուն նոյնիսկ, Վրաստանը հեղեղում է Հայաստանից տարած կաքով, կակայով, անաստներով եւ այլն:

Կառավարութիւնը հնարաւորութիւն չունի պարենաւորելու ոչ միայն ազգաբնակչութեանը, այլ[նել] կոպէկներ ստացող իւր պաշտօնեութեանը: Ազգաբնակչութիւնն ու պաշտօնեանները, որոնք չեն գողանում, կամ ստացած մթերքների պակասը լրացնելու հնարաւորութիւն չունեն գնում են բազարում հենց կառավարչական եւ Ամերիկական պահեստներից գողացուած մթերքներից մեծ գումար վճարելով: Ստացուած ուոճիկը չի բարականացնում, կառավարութիւնը ստիպուած է լինում աւելացնել եւ այսպէս՝ անվերջ:

Անհրաժեշտ է ապահովել պաշտօնեութեանը մթերքներով եւ ապա միեւնոյն ժամանակ ամենախիստ միջոցներ ծեռոք առնել այդ անապատախանատու քալանի դէմ: Այս երկու խնդիրն էլ չափազանց բարդ են, պահանջում են յատուկ եւ քազմակողմանի քննութիւն՝ ծեռնիսա մարմինների, հասարակական լայն խաւերի, մամուի: Հապճնապ կազմուած պարտադիր կանոններով կուուել դրանց դէմ՝ անմտութեան է: Ծրագրուած, յամառ կրի, լայն վերահսկութիւն, պաշտօնեութեան նիրական ապահովութիւն, անխուսափելի պատիժ գեղծումների համար, ովքեր էլ լինեն գեղծարարները:

Կոյիր դասալութեան, շարաշահութեան, պետական գոյքի իրացման, աւազակութեան ու անարիխայի բոլոր երեւոյթների դէմ պիտի ընդունի ծրագրային եւ յարատե ընոյք: Սեր հիմնական սխալներից մէկն էլ այն է, որ յաճախ հրատարակուում են կարգադրութիւններ, սահմանաւում են պատիժներ, որոնք ընդհանուր առնամք մեծ չափերով պահանձնելու են եւ որոնք այդ իսկ պատճառով, մնասն էլ մեր անփութեան՝ մնում են մոռացութեան մատնուած: Օրինակ], հրացանների ու փամփուշների յանձնուումը. ամէն անգամ յայտարարուում է վարձատրութիւնը, որը տրուելու է հրացանի համար եւ պատիժը, որուն ենթարկուելու է սահմանուած միջոցին չներկայացնողը: Անցնում է մի ամիս, նորից վարձատրութիւն, բայց երեք՝ պատիժ: Ժողովուրդը վարժուած է այդ խիստ կարգադրութիւններին եւ անուշադիր անցնում նրանց մօտից այդպիսի կարգադրութիւններ նա շատ է լսել ու կարդացել գիտի, որ դրանք էլի կրկնուելու են, իսկ պատիժ չի լինելու:

2. Անհրաժեշտ է ըստ կարելոյն շտապեցնել Ալեքսանդրապոլի Ծրջանային Դատարանի բացումը: Նպաստել դատարանին՝ իր գործառնութիւնների կատարման, յանցաւորներին գտնելու, վկաներին եւ մեղաուրներին ներկայացնելու գործում: Անհրաժեշտ է ունենալ նոր բանտ. վարչական կարգով ծերբակալուածները այժմ պահում են քրեական եւ քաղաքական յանցագործների հետ, գոյութիւն ունեցող բանտը աւելի բարեյաջող դրութեան մէջ դնել:

Ամեն ազդեցութիւն գործ դնել վերջ տալու Արտակարգ Դատարանի դանդաղ կոստութեանը, որով հասարակութեան միտքը շարունակ կապուած է պահում բոլշևիկների եւ նրանց դասի հետ։⁶² Յաճախակի ու պարբերական քննութիւնների, նրանց գործունեութեան եւ հաշիւների:

Հիմնել պաշտօնական «Նահանգական լրաբեր», պարտադիր որոշումների, պարտազանցների ու պատիժների ազդարարման, նրանց վկայագրերի յայտարարման եւ այլն, սահմանել պարբերական խորհրդակցութիւն նահանգապետի, Տեղավարութեան եւ Քաղաքային Վարչութիւնների մէջ։

Բժշկական եւ սանհիտարական տեսակէտից, նահանգը բաժանել շրջանների, իրենց բժշկական կազմով, հիւանդանոցով, դեղատներով։ Տեղում գաւառը այս տեսակէտից միանգամայն անուշաբնութեան է մատնուած։ Նահանգը պիտի ունենայ նահանգական բժիշկ, անասնաբոյժ, ճարտարապետ, խճուղիների վերակառուցող, որոնք իրեն մասնագէտներ մեծապէս կ'օգնեն նահանգապետին իրենց մասնագիտութեան խորհրդներով եւ ազատ ժամանակ ունենալով հնարաւորութիւն կը տան նրան, ինչ անհրաժեշտ է նահանգապետին՝ երկրի ընդհանուր վերահսկողութեան կառավարութեան ու բարեփոխումների օրինագիծը պատրաստելու համար։

Ահա ընդհանուր գծերով այն խնդիրները, որոնց բարեյաջող լուծումը նասամբ պիտի նպաստի ուժեղ պետականութեան ստեղծմանը, գրաւելով պետականորէն նուածող, կարող ուժերի ստուար մի քի, հնարաւորութիւն պիտի տայ նրան՝ իրենց հմուտութիւնն հայրենիքի բարգաւաճմանը նուիրաբերելու։

Իրաւախու խորհրդատու՝ (Խոյեցեան)

ԺԴ⁶³

ՔԱՂՈՒԱԾՔ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹԵԱՆ
ԽՈՐՀՐԴԻ 1920 ԹՈՒԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 16Ի ՆԻՍՏԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻՑ

17 Օգոստոսի 1920թ
Ալեքանդրապոլի

Սիածայն որոշուեց. 1) Դադարեցնել ամսիս 15-ից հաց բաշխելով ազգաբնակչութեան միջին դասին եւ զարդարանութեանը. 2) Բնիկ շքատուների թիւը կրծատել եւ տալ հաց միմիայն նրանց, որոնք կապուած են քաղաքի հետ եւ որոնք աշխատող ճեռքեր չունեն։ 3) Այդպիսիների ցուցակագրութիւնը կատարել խորհրդի խնամատարութեան յանձնաժողովի միջոցով։ 4) Չքաւորներին տրուելիք հացի արժեքը բողնել ֆունտը 10 բրութ։ 5) Սեպտեմբերից նշանակել հացի նոր գին համապատասխան հացահատիկների գնումների։ 6) Հիմնարկութիւնների ծառայողներին եւ բանուրութեանը հաց տալ մինչեւ սույն Օգոստոսի 25ը, որից յետոյ հաց տալ մայն նրանց, որոնք չունեն սեփական կամ համայնական ցանք։ 7) Դիմել կառավարութեանը բաց բողնել Քաղաքային Վարչութեան պետական ծառայողների համար պահանջունելիք հացի դէմ համապատասխան քանակութեամբ ալիւր պետական պահեստներից, եթէ այդպիսիք կամ կամ կը լինեն ապագայում։ 8) Դիմել կառավարութեանը յայտնել վարչութեան ազգաբնակչութեանը շքատը մասի պէտքերի համար սոյն սերմացուն, որ բաժանել է կառավարութիւնը Ալեքսանդրապոլի շրջանում։

Խսկականի հետ միշտ է Զարտուղար։

ԺԵ⁶⁴

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՐԱՐԱՊԵՏ
ՀԱՄԾ ՕՀԱՆՁԱՆԵԱՆԻ ԿՈՉՆ ՈՒՂՈՒԱԾ ՀԱՅ ԲԱՆԿՈՒԹԵԱՆԸ
ՈԱԶՄԱԾԱԿԱՏԻՆ ՕԺԱՆԴԱԿԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐԵԱԱԼ

25 Օգոստոսի 1920թ.

Երեւան

Հայաստանի ազգաբնակչութեան եւ զօրածակատի միջեւ սերտ կապ հաստատելու նպատակով կազմակերպուած է «Զօրածակատին Օժանդակող Կոմիտէ», որի կենտրոնը գտնուում է Երեւանում եւ շուտով ճիշդեր կը բանաց զաւորում եւ հանրապետութեան միևն քաղաքներում։

Հայաստանի Հանրապետութեան գօրքը, որ անձնուիրաբար եւ արիաբար պաշտպանուած է հայրենիքի ազատութիւնն ու անկախութիւնը մեր բազմատեսակ թշնամիների դէմ, պէտք է մեր ժողովրդի յատուկ գորգուրանքի առարկայ դառնայ, քանի որ նրան ենք պարտական մեր կեանքի, գոյքի եւ պատուի պաշտպանութիւնը։ Այն երիտասարդը, որ գօրքի մէջ չէ, եւ այն քաղաքացին, որ գօրքի հետ չէ, հայ ժողովրդի թշնամին է։ Զօրքը զոհում է իր անձն ու հանգիստը, ժողովուրդը չպէտք է խնայէ իր գանձն ու աշխատանքը, թերեւացնելու այն ծանր պարտականութիւնը, որ անողոր պայմանների բերունվ, բաժին է ընկած մեր քաջարի գօրքին։ Ուստի ողջունելի է «Զօրածակատին Օժանդակող Կոմիտէ» կազմութիւնը եւ արժանի քաջալերանքի։

Հրամայում են պատշաճաւոր իշխանութիւններին աջակցութիւն ցոյց տալ այդ կոմիտէին եւ նրա գործակալներին, որ կարողանան յաջողութեամբ կատարել իրենց հանրօգուտ յանձնառութիւնները։

Նախարարապետ՝ Հ. Օհանջանեան

ԺԶ⁶⁵

ԶՈՐԱԾԱԿԱՏԻՆ ՕԺԱՆԴԱԿՈՂ ԿՈՍԻՏԵՒԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԳՐՈՒԹԻՒՆԸ
ՈՒՂՈՒԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԵՒ
ԳԱՄԱՌԱՅԻՆ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՆ ԵՒ ՀԱՍԱՅՆԱԿԱՆ
ՎԱՐՉՈՒԹԻՒՆՆԵՐԻՆ՝ ԿՈՍԻՏԵՒԻ ԱԶԱԿՑԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐԵԱԱԼ

17 Սեպտեմբերի 1920թ.

Երեւան

Ներկակեալ ուղարկելով Զեզ «Զօրածակատին Օժանդակող Կոմիտէ» կանոնադրութիւնը եւ Պ. նախարարապետի կոչը այդ առիւ, զօրաց եւ ուտեստի ֆոնդ կազմելու հրահանգները, խնդրում ենք Զեզ անյապաղ գործի անցնել եւ

- ա) Կազմակերպել Զեր շրջաններում կոմիտէներ
- բ) Հետեւել կանոնադրութեան կէտերի գործադրութեանը
- գ) Զօրաց ուտեստի ֆոնդը կազմել։

Կոմիտէն լիայոյս է, որ կենդանի եւ համրօգուտ այս գործը մնձ ոգեւորութիւն պիտի առաջացնի ժողովրդեան լայն խանրի մէջ, պիտի արքնացնէ հասարակական նախածեռնութեան ոգին, նրան անքակտելի կապերով պիտի կապէ մեր հայրենիքի պաշտպանութեան եւ վերահսկութեան գործի հետ, որոնց մէջ գտնուում է միակ գրաւականը մեր ներկայ եւ ապագայ անդրբութեան եւ ներդաշնակ զարգացման։

Զօրաց Օժանդակութեան Կոմիտէ նախագահ Բժ. Ղազարեան

ԺԼ⁶⁶

**ԶՈՐԱԾԱԿԱՏԻՆ ՕԺԱՆԴԱԿՈՂ ԿՈՄԻՏԵԻ
ԿԱԶՄԱԿԵՊՉԱԿԱՆ ՀՐԱՀԱՆԳՆԵՐԸ ԿՈՄԻՏԵԻՆ
ՕԺԱՆԴԱԿՈՂ ՍԱՍՆԱՃԻՒՆԵՐ ԿԱԶՄԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ**

18 Մեպտեմբերի 1920թ.

Երեւան

1) Զօրածակատին օժանդակող կոմիտէի մասնաճիւղերը կազմուելու են Հայաստանի Հանրապետութեան գաւառային քաղաքներում, շրջանային կենտրոնական վայրերում եւ գիտերում:

2) Կոմիտէների կազմութեան ծեր բողնուում է քաղաքային եւ գաւառային ինքնավարութիւնների հայեցողութեան, որ կարող է լինել ընտրովի կամ նշանակովի նայած տեղական յարմարութիւններին եւ պայմաններին:

3) Կոմիտէները բաղկացած պիտի լինեն քաղաքներում 5, շրջանային կենտրոններում՝ 7, իսկ գիտերում՝ 3 հոգուց:

4) Քաղաքային եւ շրջանային Կոմիտէներն իրենց շրջաններում լիազօր իրաւունքներ ունեն կանոնադրութեան ընդգծած սահմաններում, [նրանք] անմիջական յարաբերութիւն են պահպանում Երեւանի կենտրոնական կոմիտէի հետ, իրազեկ պահուում նրան՝ իրենց գործունեութեան մասին եւ հրահանգներ նրանից ստանում:

5) Գիտական կոմիտէներն ենթարկուում են շրջանային կոմիտէներին:

Զօրածակատին Օժանդակող Կոմիտէ

ԺԸ⁶⁷

**ՇԻՐԱԿԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏԻ ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆԸ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ
ՔԱՂԱՔԱՅԻՆ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹԵԱՆԸ ԲԺԻՇԿՆԵՐԻՆ՝ ԶԻՆԱԿՈՂԻ
ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ ՕՐԵՆՔԸ ԳՈՐԾԱԴՐԵԼՈՒ ՍԱՍԻՆ**

Մեպտեմբերի 1920թ.

Երեւան

Համաձայն Օգոստոսի 13-ի օրէնքի Հայաստանում գործող բոլոր բժիշկները, դեղագործները, ֆելչէրները, ֆելչէրուիկները⁶⁸ եւ գրուեան բոյըները մինչեւ 45 տարեկան հասակը ենթարկուում են մորիլիզացիայի, ոչնչացնելով նրանց տրուած բոլոր տարկէտումները, ենթարկելով նրանց գլխաւոր բժշկասանիտարական եւ ոսպմասանիտարական վարչութիւնների վարիչներին, որոնք փոխադրած համաձայնութեամբ նշանակուում են նրանց թէ՝ ուազմական եւ թէ՝ հասարակական հիմնարկութիւններում:

Սուածարկուում եմ Ձեզ գաւառուում եւ քաղաքներում գտնուող վերոյիշեալ անձանց անմիջապէս ներկայացնել համապատասխան զինուրական պետին ու հաւաքատեղիները:

Այն անձինք, որոնք ունեն վկայական գլխաւոր բժշկասանիտարական վարչութիւնից ու ստորագրուած բժշկասանիտարական վարիչի ու ոսպմասանիտարական վարիչի կողմից չեն կանչուում, բայց առնուում են հաշուի, կատարման մասին յայտնել Զինուրական դեպարտամենտին:

Իսկական ստորագրել է Ներքին Գործոց Նախարար Արարատեանը
Իսկականի հետ ճիշտ է:

Գործավար՝ Վ. Մուրադեան
Ալեքսանդրապոլի Քաղաքային Ինքնավարութիւն

**Պ. նահանգապետի կարգադրութեամբ ուղարկուած է սոյն օրէնքի
պատճենը ի գիտութիւն եւ ի գործադրութիւն:
Դիանապետ
Գործավար՝ Վ. Մուրադեան**

ԺԹ⁶⁹

**ՇԻՐԱԿԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏԻ ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆԸ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ
ՔԱՂԱՔԱՅԻՆ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹԵԱՆԸ՝ 20-25 ՏԱՐԵԿԱՆ ՆԵՑՈՒԿ
ԶԻՆԱՊԱՐՏՆԵՐԻ ՍԱՍԻՆ ՕՐԵՆՔԸ ԳՈՐԾԱԴՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ
Մեպտեմբերի 1920թ.**

Երեւան

1. 20-25 տարեկան միայն նեցուկ զինապարտները ենթարկուում են զինակոչի, իսկ նրանց ընտանիքները պետութիւնից ամսական նպաստ են ստանում պետական ծառայողների ողջիկների նուազագոյն չափով:

Ծանօթութիւն. Հայաստանի Հանրապետութեան բարձրագոյն եւ միջնակարգ դպրոցների աշակերտներն ու ուսանողները եք նոյնիսկ 19-25 տարեկան են, տարկէտում են ստանում, աշակերտները՝ մինչեւ 22 տարին լրացնելը, ուսանողները՝ մինչեւ 27-ը լրացնելը:

Ծանօթութիւն. Իրենց տարիից անկախ տարկէտում են ստանում նաև Հայաստանի Հանրապետութեան 1. փոստ-տելեգրաֆիստները, 2. ռադիոկայարանների մասնագէտները եւ 3. երկարութիւնների մասնագէտներն ու հմուտ որակեալ բանուորները:

2. 25 տարին լրացրած նեցուկ զինապարտներին եւ 25 տարին լրացրած զինապարտների համար գործում են նեցուկների եւ տարկէտումների հին օրէնքները:

3. Այն բոլոր ազատումներն ու տարկէտումները, որոնք չեն համապատասխանում սոյն օրէնքին, կորցնում են իրենց ուժը եւ համապատասխան զինապարտները կանչուում են զինուրական ծառայութեան:

Վարչապետ՝ Օհանջանեան
Գործերի կառավարիչ՝
Իսկականի հետ ճիշտ է:
Գործավար

Ալեքսանդրապոլի տեղակարութեան
պ. նահանգապետի կարգադրութեամբ
ուղարկուում են սոյն օրէնքը ի գիտութիւն
Դիանապետ
Գործավար

Ի⁷⁰

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՐՄԱՐԱՐՈՒԹԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԵԱՆ⁷²
ՇԻՐԱԿԻ ՍԱՍՆԱՃԻՒՆԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԴԻՄՈՒՄԸ ՔԱՂԱՔԱՅԻՆ
ՎԱՐՉՈՒԹԵԱՆԸ՝ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼՈՒՄ ՍԿԱԿՈՒՏԱԿԱՆ ԸԱՐԺՄԱՆ
ՍՏԵՂԾՄԱՆ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ**

23 Մեպտեմբերի 1920թ.

Երեւան

Ալեքսանդրայպոլում իիմնուել է «Հայաստանի ընդիանուր մարմնակրթական ընկերութեան Շիրակի մասնաճիւղ», որը վերցնուում էր իր վրայ պարտականութիւն զարգացնել եւ տարածել ֆիզիկական կրթութիւնը ամբողջ Շիրակի նահանգում: Այդ ընկերութեան մէջ մտնում են հետեւալ

մասնաճիղերը՝ «Քաղէ» ընկերութիւն, «Ֆուտբոլի» խմբակներ, «Սկաուտական» խմբակներ, «Ավելետիկ» մասնաճիղ եւ այլն:

Այդ բոլոր մասնաճիղերի պարապմունքները կատարում են դպրոցից դրուսը եւ դրանց ընդհանուր դեկավարը կազմում է մի վարչութիւն, որի նախագահը եւ եմ:

Որովհետեւ քաղաքային դպրոցներում մտցրած է մարմնամարզութիւն եւ ուսուցիչները այդ առարկայից թոյլ են, ուստի այդ ուսուցիչների հետ, նրանց համաձայնութեամբ այս շաբաթից կը սկսենք մարմնամարզութեան պարապմունքները:

Յայտնելով այս բոլորը խնդրում եմ վարչութեանը ինձ ազատել իմ պաշտօնից իբրև դեկավար ֆիզիկական կրութեան Սեպտեմբերի 1-ից, որովհետեւ մեր դպրոցում պարապմունքները վկատել են: Բայց ի նկատի ունենալով իմ աշխատանքը, ես խնդրում եմ, որ ինձ վարչութիւնը տայ այն մերժմերը, որը ստանում են քաղաքային ծառայողները փողով:

Ս. Մարգարեան

ԽԱ⁷³

ՆԵՐՁԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ ԱՐԱՐԱՏԵԱՆԻ⁷⁴ ԳՐՈՒԹԻՒՆԸ
ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏԻՆ, ԳԱԽԱՌԻ
ՈՍՏԻԿԱՆԱՊԵՏԻՆ, ՔԱՂԱՔԻ ՈՍՏԻԿԱՆԱՊԵՏԻՆ՝ ԲԱՍԿՉՈՒԹԵԱՆԸ
ԶԻՆԱԿՈՎԻ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՈՐՈՇՍԱՍ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ

4 Հոկտեմբերի 1920թ.

Ալեքսանդրապոլ

Ծոտապ յայտնեցեք ազգաբնակչութեանը հետեւալ պարտադիր որոշումը.
1) Համաձայն նախարարների խորհրդի Սեպտեմբերի 30-ին հաստատուած օրէնքի, ամբողջ Հայաստանը յայտարարում է զինուորական դրութեան մէջ:
2) Յայտարարուած է 1886 և 1887 թուականների ծնուածների գօրակոչ: 3)
Անցեալում կանչուած բայց մինչեւ օրս չներկայացած թոլոր զինապարտները պարտաւոր են անյապաղ ներկայանալ համապատասխան զինուորական ատեաններին որոշած ժամանակամիջոցում: 4) Մինչեւ 1920թ. Օգոստոսի 1-ը թոլոր հիմնարկութիւնների կողմից գրուած զինուորութիւնից ազատման վկայականները համարում են անվատեր, այդպիսի վկայական ունեցողները պէտք է անյապաղ ներկայանան զինուորական ատեանները նորից ստուգուելու: 5) 1920 թուի Օգոստոսի 1-ից յետոյ տրուած զինուորութիւնից ազատման վկայականները համարում են օրինաւոր միայն այն դէպքում, եթե նրանք տրուած են զինուորական ատեաններից կամ նախարարապետի կողմից, մնացած հիմնարկութիւնների կողմից տրուած վկայականները համարում են չեղեալ: 6) Զինակոչի ենթականները, որոնք ժամանակին չեն ներկայանայ կամ ինքնակամ կը թողնեն իրենց զօրամասերը կը հաշուուեն դասալիքներ եւ 1919 թուի Յուլիսի 24-ին Նախարարների խորհրդի հաստատած օրէնքի համաձայն կը ենթարկուեն մահուան պատժի Զինուորական դաշտային դատարանի կողմից: 7) Դասալիքներին ծառայութեան ընդունողները, հետո ապրողները, նրանց ակնյայտնի թարցնողները, գիլդական կոմիսարները եւ միլիցիայի թոլոր ծառայողները, որոնց շրջանում գտնուում են դասալիքներ իմ կողմից կը պատժուեն զինուորական ժամանակի ամբողջ խստութեամբ: 8) Պարտադիր որոշման հրատարակման օրից անցեալում այս հարցի վերա-

բերմամբ յայտարարուած թոլոր որոշումները եւ հրահանգները համար-տում են չեղեալ:

Ներքին Գործերի Նախարար՝ Արարատեան Զինուորական Բաժնի Տնօրէն՝ Առաքելեան Խսկականի հետ ճիշտ է: Գործավար

ԽԳ⁷⁵

ՀՀ ՆԵՐՁԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՄԻՆԻՍՏՐՈՒԹԵԱՆ ԳՐՈՒԹԻՒՆՆ
ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԽԱՔՆԱՎԱՐՈՒԹԵԱՆԸ
ԶԻՆԱԿՈՎԻՑ ԱԶԱՏՈՒԱԾ ՊԱՇՏՈՆԵԱՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԻ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ

6 Հոկտեմբերի 1920թ.

Ալեքսանդրապոլ

Մինչեւ ամսիս 12-ը նախարարութեան անպայման ներկայացնել ցուցակը թոլոր պաշտօնեանների, որոնք ըստ օրէնքի ազատուում են զինակոչից: Նահանգապետի օգնականների, գաւառային, գաւառամասային կոմիսարների, միլիցիապետների օգնականների եւ թոլոր միլիցիանների, որոնք մինչեւ Հոկտեմբերի 1-ը եղել են միլիցիական ծառայութեան մէջ հաշուելով նրանց ծառայութիւնը դէայի զինուորական ծառայութիւնը: Այսինքն՝ տարիքը, նեցուկութեան հանգամանքը եւ ընդունելութեան ժամանակամիջոցը:

Ուղարկելով ցուցակը այն թոլոր պաշտօնեանների, որոնք համարուում են անփոխարինելի, ի նկատի ունենալով նաեւ ինքնավարութեան ծառայողներին: Այդ ցուցակների յապաղման դէպքում հաշուած թոլոր պաշտօնեանները կը զրկուեն վկայականները ունենալու հնարաւորութիւնից եւ ըստ Սեպտեմբերի 31-ի եւ Հոկտեմբերի 4-ի պարտադիր որոշումների կարող են ձերքակալուել իբրև դասալիքներ:

Ներքին Գործերի Մինիստրի օգնական՝ Զրմոյեան

Խսկականի հետ ճիշտ է:

Ի տ. գործավարի՝ Վ. Մուրադեան

Սոյն կարգադրութիւնն ուղարկուում է ի գործադրութեան

Դիանապետ՝

Գործավար՝ Վ. Մուրադեան

ԽԳ⁷⁶

Ա. ԶԱՍԱԼԵԱՆԻ⁷⁷ ՀԵՌԱԳԻՐՆ ՈՒՂԱՌԱԾ
ՀՀ ԱՐՏԳՈՐԾՆԱԽԱՐՈՒԹԵԱՆԸ ԾԻՐԱԿՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹԵԱՆ
ՏՐԱՍՍԴՐՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ

6 Հոկտեմբերի 1920թ.

Ալեքսանդրապոլ

Տրամադրութիւնը Ծիրակի նահանգում աւելի քան բարձր է, գրեթէ առանց ուժի դասալիքները եւ նոր զինուորականները հաւաքուում են այնպիսի քանակութեամբ, որ նրանց դասաւորման խնդիրը մտահոգութիւն է պատճառուում: Երկարուուու ծառայողների եւ բանուորների զինակոչի նկատմամբ կարավարութեան կայացրած որշումը մինչեւ անզամ ուշացած է: Մինչ այդ նրանք մեծ թուով կամաւոր են զրկուել եւ այժմ մենք դժուարութեամբ ենք կարողանում հանգել նախագէտներին մնալ իրենց պաշտօնում: Ժողովուրդը զգում է, թէ ինչ կտանգ է կախուած հայրենիքի գլխին եւ պատրաստ է մինչեւ վերջը կանգնելու իր կառավարութեան թիկունքին եւ յետ վանելու յանդուգն թշնամուն:

հԴ⁷⁸

**ՀԻՐԱԿԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏ ԿԱՐՈ ՍԱՍՈՒՆՈՒ ՀԵՌԱԳԻՐԸ ՆԵՐՁԻՆ
ԳՈՐԾԵՐԻ ՄԻՆԻՍՏՐ ԱՐԱՐԱՏԵԱՆԻ ԵՒ
ՌԱԶՍՎԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ ՌՈՒԲԵՆ ՏԵՐ-ՄԻՆԱՍԵԱՆԻ⁷⁹ ԱՆՈՒՆՈՎ
ՀՆԿԱՆՑԵՐԻ 1920թ.**

Ծիրակ

Մորիլիզացիան ուժեղացրինք: Վաղը անցնում էնք շրջան: Յոյս ունեն հաւաքել 1000 հոգի կամատը Ղարս ուղարկելու համար: Նահանգում միջիցիայից 60 ճիւտը պահում են Աղբարայի սահմանում: 40 ճիւտը գործածում են դասայինները հաւաքելու: Մնում է քաղաքում 50 գինուր անհրաժեշտ կարգ պաշտպանելու համար: Մնացած 100 հոգին պաշտօնից արձակուած են անհամապատասխան լինելու պատճառով, որոնց տեղ նորերն ենք հաւաքում: Վերջին երեք օրուայ ընթացքում հաւաքել ենք մոտ 2000 դասային: Յոյս ունեն մօտ օրերս հաւաքել 2000, են՝ 3405:

Ծիրակի նահանգապետ

Կարօ Սասունի

Իսկականի հետ ճիշտ է: Գործավար

հԵ⁸⁰

**ՀԻՐԱԿԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏ ԿԱՐՈ ՍԱՍՈՒՆՈՒ ՀՐԱՍԱՆԸ
ԴԱՍԱԼՔՆԵՐԻՆ ԲՈՆԵԼՈՒ ԵՒ ՊԱՏԺԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ
27 ՀՆԿԱՆՑԵՐԻ 1920թ.**

Ծիրակ

Կարգադրում են բոլոր գիտական կոմիսարներին ՇՈՐՍ ՕՐՈՒԵՅ ԸՆ-ԹԱՑՔՈՒՄ գրաւոր եւ իրենց ստորագրութեամբ կազմել գիտի բոլոր դասայինների ցուցակը՝ յիշատակելով, թէ այժմ ուր են գտնում եւ ներկայացնել ինձ ԱՆՁԱՐՄ: Այն բոլոր կոմիսարները, որոնք չեն կատարի ին այս կարգադրութիւնը կամ կը տան անհիշտ տեղեկութիւններ, կը ենթարկուեն համաձայն Հայաստանի օրենքների ամենախիստ պատժի մինչեւ ՄԱՀՈՒՄ ՊԱՏԻԺԸ:

Եթէ որեւէ գիտի կոմիսարի պատասխանը շտացուի նոյնպէս պիտի նկատուի ծանր յանցանք եւ պիտի ենթարկուի պատժի:

Ծիրակի նահանգապետ՝ ԿԱՐՕ ՍԱՍՈՒՆԻ

հԶ⁸¹

**ՀԻՐԱԿԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏ ԿԱՐՕ ՍԱՍՈՒՆՈՒ ՀԵՌԱԳԻՐԸ
ՆԵՐՁԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻՆ՝
ԻՆՔՆԱՊԱՍՏՊԱՆԱԿԱՆ ՀԱՐԿԸ ՀԱՄԱՁԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ
29 ՀՆԿԱՆՑԵՐԻ 1920թ.**

Ալեքսանդրապոլ

Ինքնապաշտպանութեան միանուագ տուրքը գնում է շատ յաջող գաւառում եւ քաղաքում: 117 միլիոնը բաշխուեց Աղբարայի գիտերի, իսկ 120-ը՝ Ալեքսանդրապոլի շորս գաւառամասերի վրա: Գիտացիութիւնը ուրախութեամբ մասնակցում է: Մինչեւ Նոյեմբերի 15-ը կը վերջանայ տուրքի գանձումը:

Նահանգապետ՝ Կարօ Սասունի

հԷ⁸²

**ՀՀ ՆԵՐՁԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ ԱՐԱՐԱՏԵԱՆԻ ՀՐԱՍԱՆԸ ԾԻՐԱԿԻ
ՆԱՀԱՆԳԱՊԵՏԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱՅԻ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹԵԱՆԸ՝
ԲՆԱԿՉՈՒԹԵԱՆԸ ԶՈՐԱԿՈՉԻ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ
30 ՀՆԿԱՆՑԵՐԻ 1920թ.**

Երեւան

Համաձայն նախարարների խորհրդի որոշման եւ Ռազմական նախարարութեան հաղորդագրութեան յայտարարում են 26 եւ 27 տարեկանների այսինքն 1885 թուի Սեպտեմբերի 17-ից յետոյ ծնուածների 1886, 1887 գինակոչ մինչեւ օրս գործող օրենքների եւ կարգադրութիւնների համաձայն: Զօրակոչը սկսել ՀՆԿԱՆՑԵՐԻ 29-ի առաւտեան ժամը 9-ից եւ վերջացնել Նոյեմբերի 2-ին երեկոյեան ժամը 6-ին: Տարկտումների վերաբերեալ՝ դեկապարունակությունը այս թուի Օգոստոսի 1-ի եւ նրանց յետոյ հրատարակած օրենքներով եւ կարգադրութիւններով: Զօրակոչի ենթարկում են նաև 2-րդ կարգի 26 եւ 27 տարեկան երկրապահները: Հրացան ունեցողները ներկայանան հրացանով: Զինակոչի ենթարկուածները պէտք է ներկայանան երեք օրուայ հացի պաշառով: 1920 թուի Օգոստոսի 1-ից առաջ գինուրական ծառայութիւնից ազատուելու նպատակով տրուած բոլոր վկայականները համարել անվաեր եւ ենթարկել նրանց գինատեանում վերաբնութեան: Զինակոչի վերաբերալ աստիճանաբար յայտնել գինուրական գործերի դեպարտամենտին:

Ներքին Գործերի նախարար՝ Արարատեան
Իսկականի հետ ճիշտ է: Զարտուղար

հԸ⁸³

**ԱՐԵՒԵԼԵԱՆ ԶՈՐԱԲԱՆԱԿԻ ՀՐԱՍԱՆՏԱՐ ՔԵՍԱԶԻՄԿԱՐԱԲԵՔԻՐԻ
ՆԱՍԱԿԻ՝ ՈՒՂԱՌԻԾ ԳԻՒՄՐԻՒ ՔԱՂԱՔԱՅԻ ՎԱՐՉՈՒԹԵԱՆԸ՝
ԶԻՆԱԴԱԴԱՐԻ ՊԱՅՍԱՆՆԵՐԻ ՍԱՍԻՆ**

7 Նոյեմբեր 1920թ.

Գիմրի

Յարգելի քաղաքագլուխ:

Դաշնակցականների կողմից շարունակուած խառնակութեան հետեւանօք, բանակս ստիպուեցաւ յառաջ խաղալ: Երկու կողմից կառավարութեան մէջ մինչեւ հաշտութեան պայմանները որոշուելը Արևելեան հրամանատարութիւնը եւ Երեւանի կառավարութիւնը ընդունած են, որ Գիմրին գրաւուի:

Գիմրիի բերդը եւ կայարանը գրաւելու մասին որոշած գօրամասը այսօր ճաշից յետոյ որոշեալ տեղը պէտք է հասնին: Իմ ամենաբուռն ցանկութիւնն է, որ զօրքը մտած ժամանակ ժողովրդեան կեանքին, պատուին ու գոյրին երբեք շախտի դիաչին, խնդրում եմ, որ բոլորը վստահութեամբ իրարանշիր մարդ իր գործով զրադուի: Զաղարի ապահովութիւնը եւ խաղաղութիւնը պահպանելը Զեր խնամքին կը յանձնուին, մինչեւ որ Զեր կողմից օգնութիւն շահանջուի մեր կողմից երբեք միջամտութիւն չափուի լինի:

Յատկապես կը բարեւեմ Գիմրիի ժողովրդին: Թող իրազեկ լինեն այս յայտարարութեանը եւ եթէ ունեն մի ուրիշ ցանկութիւն, խնդրում եմ, որ մի մարմնի միջոցով ինձ յայտնեն այդ մասին:

Ընդունեցեք յարգանքներս

Արեւելեան զօրաբանակի հրամանատար Ֆերիկ⁸⁵

**ՆԵՐՁԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ԳՐՈՒԹԻՒՆԸ՝
ԵՐԵՒԱՆԻ ԱՐՏԱԿԱՐԳ ԴԱՏԱՐԱՆԻՆ՝ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԱՆԿՄԱՆ
ԺԱՄԱՆԱԿ ԻՐԵՆՑ ՊԱՇԾՕՆԸ ԼՔԱԾ
ՊԱՇԾՕՆԵԱՆԵՐԻՆ ԴԱՏԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ**

8 Նոյեմբերի 1920թ.

Երեւան

Քաղաքական բնոյթ կրող մի շարք հանգանանքներ, որպիսին են ներկայ պարագայում պաշտօնը լրելը, թիկունքը քայլաքելը եւ այլն եւ այլն, ենթակայ են արտակարգ դատարանին: Այդ օրինական յանցանքի մէջ մեղադրել մի շարք պաշտօնեաները, որոնք Ալեքսանդրապոլի անկման ժամանակ լրել են իրենց պաշտօնեաները, բողել հեռացել են քաղաքից, այժմ ձերքակալուած են կառավարութեան կողմից եւ պէտք է դատուեն: Որպէսզի նորա երկար ժամանակ չզրկուեն իրենց ազատութիւնից առանց հարցաքննութեան, խնդրում են շտապ կերպով նշանակել դատարանիդ կողմից երկու քննիչ նրանց յանցանքները քննելու համար:

**Ներքին գործերի նախարարի կարգադրութեամբ
Վարչական Դեպարտամենտի տեսուչ
Գործավար**

L⁸⁷

**ՆԵՐՁԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՄԻՆԻՍՏՐԻ ՏԵՂԱԿԱԼ ՂՈՐՂԱՆԵԱՆԻ
ՀԵՌԱԳԻՐԸ ԾԻՐԱԿԻ ՓՈԽՆԱՀԱՆԳԱՊԵՏ ԼՈՌԵՑԵԱՆԻՆ՝
ԿԱՐՈ ՍԱՍՈՒՆՈՒ ԳՏՆՈՒԵԼՈՒ ՎԱՅՐԻ ՍԱՍԻՆ**

10 Նոյեմբերի 1920թ.
Ղարաքիլիսա

Նահանգապետ Սասունին գտնում է Սոգուրիլ⁸⁸ զիւղում: Կապ ստեղծեք նրա հետ եւ ամէն օր հեռազեցեք քաղաքի դրութեան մասին:

Ներքորդմին օգն. Նորդանեան

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

¹ՀԱԱ, Ֆ. 105, գ.1, գ.2905, թ.83:

²Տես՝ Արտաշև Բաբակեան, «Կարսի Անկումը», Հայրենիք Ամսագիր, 1923, թի 12. նաև՝ Հայկ Գնդունի, «Կարսի Անկումին Պատճառները», Մարտկոց, Փարիզ, 10 Նոյեմբեր, 1932. նաև՝ Վահե Արծրունի, Հայ-Տաճկական Պատերազմը, Հայ Սպայտիւնին, Ծառախ, Երեւան, 2002. նաև՝ Արարատ Յակոբեան, 1920թ. Թուրք-Հայկական Պատերազմի Պատմութեան Փորձն Ու Դասերը, Երեւան, 2004. նաև՝ Էդիկ Զոհրաբեան, Թուրք-Հայկական Պատերազմը եւ Տեղութիւնները, Երեւան, 1997. նաև՝ Կարօ Սասունի, «Հայ-Թուրքական Պատերազմը», Հայրենիք Ամսագիր, Բուստոն, 1926, թի 7:

³ՀԱԱ, Ֆ. 200, գ.1, գ.600, մաս 2, թ.111:

⁴ՀԱԱ, Ֆ. 1457, գ.1, գ.181, թ.4:

⁵Այս մասին ուղղակի վկայութիւնների շնոր հանդիպել արխիվային նիւթերում: Մենք ամսամբ այս լսել ենք մեր ականատես տատից: Կայ նաև Իրազեկի յօդուած՝ «Տաճկական Վայրագութիւններ Ալեքսանդրապոլի Գաւառում», Յառաջ, Հոկտ. 22, 1919: Թեև այն վերաբերում է 1918ին, բայց պայմանները նոյնանման են:

⁶Տես ՀԱԱ, ֆ. 200, գ. 1, գ. 126, թ.126:

⁷Վահե Արծրունի, Հայ-Տաճկական Պատերազմը, Հայ Սպայտիւնին, Ծառախ, Երեւան 2002, էջ 286: Կարծում ենք, որ այս մասին անուղղակիուն վկայում է մեր յօդուածում տեղ գտած 1920 Նոյեմբերի 7ի Կարաքեքիրի նամակը ուղղուած Ալեքսանդրապոլի քաղաքագլխին: Ալեքսանդրապոլի քաղաքագլխին Լեւոն Սարգսեանը եւս դիմաւորել է բուրքերին, որպէսզի անտեղի կտորածներ չինեն: Աղ ու հացով դիմաւորելու իմաստը այն էր, որ անհրաժեշտ էր փրկել խաղաղ բնակչութեան ֆիզիկական գոյութիւնը, երբ արդեն հայոց բանակը պարտուած էր լինում, իսկ բանկչութիւնը՝ բողնուած բախտի քահանայինը:

⁸ՀԱԱ, ֆ.200, գ.1, գ.602, մաս 4, թ.255. նաև՝ ՀԱԱ, ֆ. 200, գ. 1, գ. 529, մաս 4, թ. 129-34:

⁹ՀԱԱ, ֆ.4033, գ. 1, գ. 127, թ. 167:

¹⁰Սա առանձին նիւթ է, որ մեզ կը շեղի մեր նիւթի բուն նպատակներից:

¹¹ՀԱԱ, Ֆ. 114, գ.2, գ. 10, թ.1-6:

¹²ՀԱԱ, Ֆ.1022, գ.2, գ.189, թ.2:

¹³ՀԱԱ, Ֆ.1022, գ.2, գ.189, թ.2:

¹⁴ՀԱԱ, Ֆ. 201, գ.1, գ.122, թ.1. նաև՝ ՀԱԱ, Ֆ.1022, գ.3, գ. 275 A, թ.1-6:

¹⁵ՀԱԱ, Ֆ.1022, գ. 2, գ. 189, թ. 3. նաև՝ ՀԱԱ, Ֆ. 200, գ.1, գ.448, թ.1. նաև՝ Ժադովուրդ, Երեւան 1920, թի 182:

¹⁶ՀԱԱ, Ֆ. 4033, գ. 4, գ. 127, թ. 165-166. նաև՝ ՀԱԱ, Ֆ. 114, գ. 2, գ. 10, թ. 1-5:

¹⁷Նոյն:

¹⁸ՀԱԱ, ֆ.1022, գ. 3, գ. 323, թ. 1-2. նաև՝ ՀԱԱ, Ֆ. 114, գ. 1, գ. 62, թ. 3. նաև՝ ՀԱԱ, Ֆ. 4033, գ. 2, գ. 1157, թ. 13:

¹⁹ՀԱԱ, Ֆ. 4033, գ.4, գ.127, թ. 29:

²⁰ՀԱԱ, Ֆ. 114, գ.2, գ. 33, թ. 54-57:

²¹ՀԱԱ, Ֆ.144, գ. 3ա, գ. 70, թ. 4. նաև՝ ՀԱԱ, Ֆ. 4033, գ. 2, գ. 1204. թ.1:

²²ՀԱԱ, Ֆ. 144, գ. 3, գ. 4, թ. 10:

²³ՀԱԱ, Ֆ. 105, գ.1, գ.2881, թ. 2. Ճեռազիր:

²⁴Հայկ Սելյոնեան - Ալեքսանդրապոլի քաղաքագլխին է եղել 1919 Սեպտեմբեր-1920 Մարտին: Ազատուել է քաղաքագլխի պաշտօնից իր դիմումի համաձայն:

²⁵Արտաշէս Բաբակեան - 1919 Հոկտեմբերի 31-1920 Յունուարի 8ը՝ Հանրային Խնամատարութեան եւ Աշխատանքի Նախարար: 1920 Յունուարի 8-Մայսի 5ը՝ Հանրային Խնամատարութեան եւ Վերաշնուրեան Նախարար:

²⁶Համաձարակ:

²⁷ՀԱԱ, Ֆ. 105, գ. 1, գ. 2905, թ. 5. Ճեռազիր:

²⁸Պարոյր Գէօնիքեան - Ալեքսանդրապոլի Քաղաքագլխին Վարչութեան անդամ, Սայիս 4-Յունիս 4 1919՝ Քաղաքագլխին Խորիրի Նախագահ, Յունիս-Սեպտեմբեր 1919՝ քաղաքագլխի պաշտօնակատար, Ապրիլ-Յունիս 1920՝ քաղաքագլխին, 1920 Յունիսից մինչև Սեպտեմբեր 16ը քաղաքագլխի տեղապահ եւ Վարչութեան անդամ էր: Ազատուել է այդ պաշտօններից իր դիմումի համաձայն:

²⁹ՀԱԱ, Ֆ. 205, գ. 1, գ. 801, 2րդ մաս, թ. 161. Ճեռազիր:

³⁰Մինչև 1919 Յուլիսի 5ը երկրու մքերքների հայթայրում եւ բաշխումը կազմակերպելու աշխատանքով գրադուս էր Պարտանամթերման Նախարարութիւնը: 1919 Յուլիսի 5ին՝ Վերջինիս լուծարումից յետոյ, այդ գործառոյթներն անցնում են Հանրային Խնամատարութեան եւ Աշխատանքի Նախարարութեանը: 1920 Յունուարի 8ին նախարարութիւնը վերանուանել է Հանրային Խնամատարութեան եւ Վերաշնուրեան Նախարարութիւն: Հայաստանում հացի եւ ալիքի բաժանումը իրականացնում է Հայաստանի կառավարութեան կողմից, Սերձար Արեւելքի Ամերիկան Նպաստանատոյցի Կոմիտէ (ՍԱՆԿ) հսկողութեամբ: Երկիրը բաժանուած էր շրջանների, որոնցից իրաքանչիւնը ուներ իր բաշխում կոմիտէն: Այս կոմիտէն:

տեսերը պատասխանառու էին ալիրի և հացի ճիշդ բաժանման համար իրենց շրջաններում: Նրանք պէտք է ներկայացնեին բոլոր ճշգրիտ տուեալները,թէ՛ բնակչութեան և թէ՝ անհրաժեշտ ալիրի: Այս տուեալները ուղարկում էին Ամերկեան Կոմիտեն, որն էլ բաց էր բողնում համապատասխան քանակի ալիր այդ շրջանների համար:

³¹ՀԱԱ, Ֆ. 205, գ. 1, գ. 801, 2րդ մաս, թ.163, հեռագրական ձեռագիր բլանկ:

³²Հանրային Խնամատարութեան Նախարարութիւնը ստեղծուել է Հայաստանի Հանրապետութեան երկրորդ կառավարութեան վերակազմաւրիման ժամանակ 1918 Նոյեմբերի 4ին: Առաջին նախարարը Խ. Կարճիկեանն էր, որի սպանութիւնից յետոյ մօտ մէկ ամիս (15.11.1918-13.12.1918) Հանրային Խնամատարութեան նախարարի պաշտօնակատարը Արամ Մանուկեանն էր:

³³ՀԱԱ, Ֆ. 205, գ. 1, գ. 801, 2րդ մաս, թ.176-179, հեռագրական ձեռագիր բլանկ:

³⁴ՄԱԱՆի Կոմիտեի 1919 Դեկտեմբերի թի 22 հրամանով ալիրի բաժանումը տեղի էր ունենում Հայաստանի իշխանութիւնների կողմից Կոմիտեի հսկողութեամբ:

³⁵Խօսքը 1918ի բուրքական արշաւանքների հետեւանքների մասին է: Ալեքսանդրապուտ ՀՀ ներկայացուցիչ Խոյեցեանի գենուցումների համաձայն բուրքերն Ալեքսանդրապուտի շրջանից տեղափոխել էին սայերի 80%-ը, գերի տարել՝ 12000 հոգու, զարդարանենքի թիւը հասել էր 45000ի: Նրանք Ալեքսանդրապուտի շրջանից խլել ու տարել էին 50000ից աւելի խոշոր եղջերաւոր անսամբլներ, 100000 ոչխար, 5000ից աւելի ծի, 2.5 միլիոն փուր ցորեն, 1 միլիոն փուր գարի, եւ զանազան մթերքներ: Թալանել ու տարել էին խանութների ապրանքները, մանուֆակտուրան, երկարեղենը, երկրագործական գործիքներն ու պարագաները, կահ կարսախն, գորգերն ու կարպետները, նաև՝ մեծ քանակութեամբ ապակեղեն, նոյնիսկ տանիքների թիթեղը:

³⁶Տեղական ինքնավարութիւն: 1920ին Հայաստանը բաժանուած էր չորս նահանգների: Գաւառներում կազմակերպուած էին ինքնավարութիւններ:

³⁷Արքարան 1920 Յունիսին կազմուած Շիրակի նահանգի կազմում էր. այժմ՝ Շիրակի Սարգի Ամասիայի շրջան:

³⁸Ֆինանսների Սինիստր:

³⁹ՀԱԱ, Ֆ. 205, գ. 1, գ. 801, 2րդ մաս, թ. 217, ձեռագիր:

⁴⁰Այսինք խոտ է ուսում:

⁴¹Սիհրան Գրիգորեան - Ալեքսանդրապուտի Բաշխման Կոմիտեի Նախագահ:

⁴²ՀԱԱ, Ֆ. 205, գ. 1, գ. 801, 2րդ մաս, թ. 215-216, ձեռագիր:

⁴³ՀԱԱ, Ֆ. 205, գ. 1, գ. 801, 2րդ մաս, թ. 220-221, ձեռագիր:

⁴⁴1919 Մայիսի 22ին Ալեքսանդրապուտի քաղաքավոլս Սարգսեանի և ՄԱԱՆի Կոմիտեի տեղի ներկայացուցիչների միջև կնքուած պայմանագրով Ալեքսանդրապուտի որրանցները յանձնուել էին Կոմիտեն:

⁴⁵ՀԱԱ, Ֆ. 205, գ. 1, գ. 801, 2րդ մաս, թ. 239-240. հեռագրական ձեռագիր բլանկ:

⁴⁶ՀԱԱ, Ֆ. 205, գ. 1, գ. 801, 2րդ մաս, թ. 247-248. հեռագրական ձեռագիր բլանկ:

⁴⁷1920 Մայիսի 5ին ստեղծուած Քիոր-կառավարութեան վարչապետը Համօ Օհանջանեանն էր:

⁴⁸Ալեքսանդրապուտի կրծատ անուանումը:

⁴⁹Կարօ Սասունի - ՀՅԴ Քիորոյի անդամ: Հայաստանի խորհրդարանի անդամ, Մայիս-Նոյեմբեր 1920 Շիրակի նահանգապետ:

⁵⁰ՀԱԱ, Ֆ. 205, գ. 1, գ. 801, 2րդ մաս, թ. 245-245 հեռագրական ձեռագիր բլանկ:

⁵¹Յապատմ Բաշխող Կոմիտե:

⁵²ՀԱԱ, Ֆ. 205, գ. 1, գ. 801, 2րդ մաս, թ. 249-251. հեռագրական ձեռագիր բլանկ:

⁵³Ներքին Գործերի Եւ Զինուրական Նախարարը Ռուբեն Տեր-Սիրնասեանն էր, Երկրագործութեանը՝ Սիմոն Վրացեանը:

⁵⁴ՀԱԱ, Ֆ. 201, գ. 1, գ. 49, թ. 88-93, ձեռագիր:

⁵⁵Գերգ Խոյեցեան - Մայիս-Դեկտեմբեր 1918ին՝ ՀՀ ներկայացուցիչ Ալեքսանդրապուտ 1919 Ապրիլին՝ Ալեքսանդրապուտի Քաղաքային Խորհրդի Երաւասուների ցուցակում ներկայացուած սոցիալիստական միուրինների կողմից, երդուեալ հաւատարմատար, 1919 Դեկտեմբերին՝ Քաղաքային Վարչութեան քարտուղար, 1920 Մայիսից՝ Շիրակի նահանգապետ Կարօ Սասունու իրավախորհրդատու:

⁵⁶Նախարատութիւնը բնագրում թերի է: Կարդալ այսպէս՝ «Թուեւելիզմ գլխաւոր վտանգն ու ուժն միաժամանակ, որ նրան առժամանակ անյաղթելի է դարձրել, նրա վարակի յատկութիւնն է: Ամէն մի պայքար նրա դէմ ժողովուած է եւ մարտնչողների վարակման վտանգի հետ»:

⁵⁷Պանրուրքիստական կուսակցութիւն, իիմնադրութիւնը է Քարուում 1911ին, գործների վերսկսել է 1992ին:

⁵⁸Բնագրում նախարատութիւնը թերի է:

⁵⁹Նկատի ունի Ռուսական Կայսրութեան ցարին:

⁶⁰ՀՀ ներքին կենաքը ամենացատը հարցերից էին հանրապետութեան տարածքում ապրող մեծաքի բուրք-քարարների խոռվութիւնները: Դրանք հրակրում էին թուրքիայի եւ Ալբրեծանի կողմից: Թուրք-քարարական խոռվարները չին ենք առակտում Հայաստանի օրինական իշխանութիւններին: Հայածում էին հայ խաղաղ բնակչութեանը, կատարում ահաբեկչական գործողութիւնները, փակում ճանապարհները:

⁶¹Ընդգծումը մերն է:

⁶²Մայիսեան ապստամբութեան ճնշումից յետոյ, կառավարութեան 1920 Մայիսի 8ին ընդունած որոշումով ստեղծուեց արտակարգ դատարան:

⁶³ՀԱԱ, Ֆ. 205, գ. 1, գ. 801, 2րդ մաս, թ. 299 վաերացուած ձեռագիր պատմէն:

⁶⁴ՀԱԱ, Ֆ. 105, գ. 1, գ. 2883, թ. 3, տպագիր օրինակ:

⁶⁵ՀԱԱ, Ֆ. 105, գ. 1, գ. 2883, թ. 2, տպագիր օրինակ:

⁶⁶ՀԱԱ, Ֆ. 105, գ. 1, գ. 2883, թ. 3, տպագիր օրինակ:

⁶⁷ՀԱԱ, Ֆ. 105, գ. 1, գ. 2905, թ. 93, վաերացուած ձեռագիր պատմէն:

⁶⁸Սահիստարներ:

⁶⁹ՀԱԱ, Ֆ. 105, գ. 1, գ. 2905, թ. 29, վաերացուած ձեռագիր պատմէն:

⁷⁰1919ի ամռանը ՀՀ կառավարութեան կողմից ընդունուած «Զինապարտների Հաշուածման Ու Զինակոչի Սասին» օրենքի համաձայն գօրակոչից ազատում էր անաշխատունակ ծննդների ունեցող ընտանիքի միակ կերակրողը (նեցուկ):

⁷¹ՀԱԱ, Ֆ. 105, գ. 1, գ. 2857, թ. 1-2, ձեռագիր:

⁷²Հայ Սարմնակրտական Ընդհանուր Սիորինը ստեղծուել է 1919ին Կ. Պոլսում: 1920 Յուլիսի 20ին ՀՄԴ Վարչութեան վարչութեանը գնալով ՀՀ Կրրութեան Նախարար Նիկոլ Արքալեանի դիմումին Հայաստան է գործուղում Վահան Շերազին, Տիգրան Խոյեանին եւ Օմիկ Եազմաշեանին՝ հայրենիքում սկասուական շարժումը տարածելու համար: Սիորինը Հայաստանում գործել է մինչև 1923: 1924ից այն իր գործունեութիւնը ծաւաղել է Սիիտուքում:

⁷³ՀԱԱ, Ֆ. 105, գ. 1, գ. 2905, թ. 83, վաերացուած ձեռագիր պատմէն:

⁷⁴Սարգիս Արքալեանը ՀՀ Կրրութեան վարչութեանը էր 1920 Սեպտեմբեր-Նոյեմբերին:

⁷⁵ՀԱԱ, Ֆ. 105, գ. 1, գ. 2905, թ. 72, վաերացուած ձեռագիր պատմէն:

⁷⁶ՀԱԱ, Ֆ. 200, գ. 1, գ. 343, թ. 59, հեռագրական ձեռագիր բլանկ:

⁷⁷Արշակ Զամալեան - ՀՀ կառավարութեան Նախարար՝ 03.04.1920-23.11.1920:

⁷⁸ՀԱԱ, Ֆ. 201, գ. 1, գ. 49, թ. 43, վաերացուած մեքենագիր պատմէն:

⁷⁹Ռուբեն Տեր-Սիրնասեան (1882-1952) - Հայոց Ազգային Խորհրդի անդամ, Հայաստանի Հանրապետութեան օրօք՝ Զինուրական Նախարար:

⁸⁰ՀԱԱ, Ֆ. 201, գ. 1, գ. 49, թ. 82, տպագիր օրինակ:

⁸¹ՀԱՍ, Ֆ. 201, գ.1, զ. 49, թ. 74, հեռազրական ձեռագիր բլանկ:

⁸²Նոյն հեռազրի պատճենն ուղարկվում է. նաև՝ ՀԱՍ, Ֆ. 105, գ.1, զ.2905, թ.72, վաերացուած ձեռագիր պատճեն:

⁸³ՀԱՍ, Ֆ.105, գ. 1, զ. 3000, թ. 1, մերենազիր: Թարգմանութիւն ֆրանսերէնից:

⁸⁴Խօսքը Լեռն Սարգսեանի մասին է:

⁸⁵Խօսքը վերաբերում է Կարաբերիր փաշային: Ֆերիկը Օսմանեան բանակում ուզմական աստիճան էր: Կարաբերիր փաշան այս աստիճանը ստացել էր 1920ի բուրք-հայկական պատերազմի ժամանակ:

⁸⁶ՀԱՍ, Ֆ. 201, գ.1, զ.122, թ.1, մերենազիր:

⁸⁷ՀԱՍ, Ֆ. 201, գ.1, զ. 49, թ. 86, մերենազիր:

⁸⁸Սովորութիւն - զիտ Հայաստանի հարաւարեւելեան մասում: Ներկայում՝ Սահմանդրիք:

THE PROVINCE OF ALEXANDROPOL PRIOR TO THE 1920 TURKISH-ARMENIAN WAR (Summary)

KARINE ALEKSANYAN
karine.aleksanyan@yahoo.com

In this article the author publishes archival documents which shed light on the socio-economic and political situation in the western border areas of the Republic of Armenia at the time of the Turkish-Armenian War. The author analyses the reasons which led the local Armenian population to host the Turkish army with the traditional bread and salt.

In 1918 in the occupied regions of the Republic of Armenia, the Turks aimed not only at massacring the Armenians but at looting them too and ruining the economic basis of the Armenian state. Such a policy was aimed at making impossible the future existence of Armenia.

The short-lived Republic of Armenia bore the consequences of this Turkish policy. It was particularly felt in the Province of Alexandropol, which suffered the consequences of Turkish destruction long after the retreat of the Turkish army. Specifically agriculture including animal farming, was badly hit, which resulted in a famine that threatened the province from January 1919. The refugees who poured in as a result of the 1915 Armenian Genocide constituted a large part of the inhabitants in the province. These refugees lived in horrible conditions. They had gathered in the province with the hope of returning to their residences as soon as the borders were openend. However, prior to the return of Kars to the Republic of Armenia, thousands of Armenian refugees lost their lives. Their death caused plagues in Alexandropol province, which claimed further lives among the local population.

In May-April 1920, the famine reached unprecedented heights. The majority of the population was forced to eat only vegetables. The conditions were further worsened after the civil disturbances in May, and as a result the city faced absolute famine. The famished population of the province was even unable to harvest the crops, and the Province remained in dire socio-economic straits until November 1920.

Domestic politics was unstable too. Though the strict implementation of law and punitive measures by the Bureau-government that had come to power in May had suppressed the rebellion of the Bolsheviks, violation of civic rights had undermined the bases of statehood.

The strict measures of the Bureau-government led to the imprisonment of hundreds of people, while others were proclaimed outlaws. When Garo Sasooni was the chief administrator of Shirak province, partisan interests were prioritised at the expense of the state. The monopoly of party members and their disrespect for law and legality further

undermined the bases of statehood in general and the concept of the state among the population.

The Province, which was experiencing such socio-economic and political conditions, was surrendered to the Turks in accordance with the November 7, 1920 armistice. The Turks combined military action with diplomatic deception, and occupied the Province of Alexandropol, and kept it under military occupation for six months. These six months were enough to extensively loot the area and kill its defenseless population. In order to maintain its physical existence, the Armenian population of the area was forced to host the Turks with the traditional bread and salt and proclaim Soviet rule.